

# ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ԶԱՄԱՐ

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա

«ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ  
ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ»

ԵՐԵՎԱՆ 2014



Եվրոպայում անվտանգության և  
 համագործակցության կազմակերպություն  
 Երևանյան գրասենյակ

**Խմբագիրներ**

Մարգիս Ասատրյանց  
 Մերի Հայրապետյան

**Հետազոտող թիմ**

Մարիամ Մանուկյան  
 Դավիթ Կարապետյան

**Հայեցակարգի մշակման փորձագիտական թիմ**

Արմինե Յարալովա  
 Արուս Հարությունյան  
 Հայկանուշ Ներսիսյան

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կողմից կատարված հետազոտության զեկույցը տպագրվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ ուսանողական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների ընդարձակման, կրթության որակի վերաբերյալ տեղական մակարդակում քննարկումների կազմակերպման և այդ գործընթացում ընդգրկված ուսանողների աջակցության նպատակով:

Սույն հրատարակության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

ISBN 978-92-9234-286-9

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Մաս I

#### «Որակի ապահովման համակարգ - ուսանողի մոդել»

հայեցակարգային փաստաթուղթ	5
<b>Բաժին 1.</b> Բարձրագույն կրթության որակի ապահովումը	8
<b>Բաժին 2.</b> Բուհական որակի ապահովման ծրագրերի մակարդակ	9
<b>Բաժին 3.</b> Ուսանողակենտրոն ուսուցում. Որակի ապահովման համակարգ	11
<b>Բաժին 4.</b> ՀՈՒԱԱ գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները	13
<b>Բաժին 5.</b> Ուսանողի մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին	16
<b>Բաժին 6.</b> Ուսանողի մոդել. Տեսակետներ և դիրքորոշում որակի ապահովման շուրջը	19

### Մաս II

#### Որակի և վերանայման գործընթացներ

Ի՞նչ է որակը	27
Ուսանողների ուսուցման փորձ	38
Համագործակցություն	44
Որակի վերանայման գործընթաց	55

### Մաս III

#### Հմտություններ

Կրթությանը նվիրված հանդիպումներին հաճախելու նախապատրաստում	67
Փոփոխությունների իրագործում	69
Հաղորդակցության հմտություններ	76



# ՄԱՍ I

«ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ  
– ՈՒՍԱՆՈՂԻ ՄՈԴԵԼ»

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հայեցակարգի շրջանակներում ներկայացնում ենք ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգն ու գործընթացը, ինչպես նաև բարձրագույն կրթության որակի վերաբերյալ ուսանողի դիրքորոշումն ու տեսակետը՝ որպես բարձրագույն կրթության շահառու և պահանջատեր: Փաստաթուղթը կազմակերպության նախաձեռնությամբ իրականացվող երկարաժամկետ նախագծի վերջնական արդյունքն է:

ՀՈՒԱԱ արդի խնդիրներից է ուսանողների տեսակետի ներկայացումը ոլորտի մյուս շահակիցներին, այդ թվում՝ ռեկտորատներին, որոշումներ ընդունող վարչական և գերատեսչական կառավարման համապատասխան մարմիններին: Առանձնահատուկ կարևորում ենք ուսանողի իրազեկվածության, ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրման և որակյալ բարձրագույն կրթության հասնելու ճանապարհին ուսանողի մասնակցության քարոզչությունը:

Բարձրագույն կրթության ոլորտի որակի ապահովման մասնագետները, նկարագրելով ՀՀ-ում որակի ապահովման գործընթացը և շեշտադրելով ուսանողների դերն ու ներգրավվածությունը որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացներում, բարձրագույն կրթության ոլորտում որակը դիտարկել են որպես

1. գերազանցություն,
2. կայարարելություն,
3. համապատասխանություն նպատակին,
4. վճարված գումարին համարժեք մատուցված ծառայություն:

Որակյալ կրթությունն ասելով նկատի ենք ունենում վերջնարդյունքը, այսինքն՝ այն, թե ուսանողն ինչ գիտելիքների պաշարով է ավարտում տվյալ համալսարանը և արդյոք պատրաստ է հարմարվելու աշխատաշուկայի պահանջներին:

Սույն հաշվետվության շրջանակներում անդրադառնում ենք ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման բուհական համակարգին և ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրներին, որոնց հանգել ենք մի շարք մտագրոհների արդյունքում:



## **ԲԱԺԻՆ 1.**

### **ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՄԸ**

Որակը տարբերակող մի հատկանիշ է, որն ուղեցույց է ուսանողների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Բարձրագույն կրթության որակն առաջնային նշանակություն ունի եվրոպական բարձրագույն կրթության տարածքում, որի ապահովման հիմնական գործիքն ու շարժիչ ուժը Բոլոնյան գործընթացն է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները կրթության մատուցման կարևորագույն գործառույթն իրականացնելիս պետք է համապատասխանեն որակական որոշակի չափանիշների, որոնք սահմանվում են յուրաքանչյուր բուհի հավատարմագրման գործընթացում: Բարձրագույն կրթության որակի ապահովումը թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակներում բավականին բարդ գործընթաց է և ենթադրում է սահմանված որոշակի ընթացակարգ: Բարձրագույն կրթություն մատուցող յուրաքանչյուր համալսարան նշված երկու մակարդակներում այսօր ինքնուրույն է իրականացնում որակի ապահովման գործընթացը և փորձում ինքնավերահսկողության միջոցով բարձր պահել մատուցված կրթության որակը:

ՀՈՒԱԱ կարևորագույն խնդիրներից է բուհերում որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև կառավարման և ուսումնական պլանների մշակման գործում ուսանողների ներգրավվածության բարձրացումը: Այս համատեքստում մեր առաքելությունն է օժանդակել այս գործընթացին՝ որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերում և կառավարման գործընթացում ուսանողների դերի բարձրացմամբ:

**ԲԱԺԻՆ 2.****ԲՈՒՀԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱԿԱՐԳԱԿ**

Գիտակցելով, որ արտաքին մակարդակում որակի ապահովման գործընթացները կարող են իրականացվել երկարատև ժամանակամիջոցում, բոլոր հաստատությունները պետք է ծրագրերի մակարդակով ևս զարգացնեն որակի ներքին ապահովման գործընթացներ: Ինստիտուցիոնալ կառավարող և ղեկավար մարմինները, գիտական և տեխնիկական անձնակազմը, ինչպես նաև ուսանողները և նրանց ներկայացուցիչները պետք է լիովին ներգրավված լինեն կրթական ծրագրի որակի ապահովման, ինչպես նաև պլանավորման, իրականացման և վերանայման գործընթացներում: Արտաքին վերանայման բաժինը պետք է ծրագրերի մակարդակով գնահատի ներքին որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը: Ծրագրերի մակարդակով որակի ապահովումը անհրաժեշտ է, քանի որ նույնիսկ հաստատությունների միջև չափորոշիչները և ընթացակարգերը կարող են տարբեր լինել, ուստի ուսանողները ծրագրի ընտրության ժամանակ պետք է կարողանան հենվել հավաստի և ճշգրիտ տեղեկատվության վրա:

Որակի ապահովման կենտրոնի կողմից տարիների ընթացքում ներքին և արտաքին վերահսկման ընթացակարգերի իրականացման մասին տեղեկատվությունը պետք է հրապարակվի և հասանելի լինի ուսանողներին: Ծրագրի մակարդակով արտաքին աուդիտը չպետք է առաջադրի ուսուցման և հետազոտական աշխատանքների ազատությանը առնչվող հարցեր, այլ պետք է ուսումնասիրի այդ մակարդակում ակադեմիական բոլոր ասպեկտների ապահովումը, օրինակ՝ գրադարան և SS ռեսուրսներ, դասախոսի աջակցություն, ուսանողների մասնակցություն և այլն, և պետք է օգտագործվի հաստատության կողմից՝ բոլոր ծրագրերի որակն ապահովելու և բարելավելու նպատակով: Արտաքին աուդիտի այս բոլոր գործընթացները պետք է լիարժեքորեն համապատասխանեցվեն ինստիտուցիոնալ կառավարման, գիտական և տեխնիկական անձնակազմին, ինչպես նաև ուսանողնե-

րին և նրանց ներկայացուցիչներին: Այդ մասնակցությունը պետք է ներառի ուսանողներին՝ որպես արտաքին վերահսկման բաժնի լիիրավ անդամներ: Տվյալ բաժնի բոլոր անդամները պետք է լինեն հնարավորինս անկախ, այդ գործընթացն էլ պետք է հիմնված լինի գործընկերների կատարած աշխատանքի գնահատման վրա: Բարձրագույն կրթություն մատուցող յուրաքանչյուր համալսարան այսօր ինքն է իրականացնում որակի ապահովման թե՛ ներքին, թե՛ արտաքին գործընթացները, և ինքնավերահսկողության միջոցով փորձում է բարձր պահել մատուցված կրթության որակը, որի համար ստեղծվում են այդ հարցերով զբաղվող որակի ապահովման հանձնաժողովներ: Որակի արտաքին ապահովման գործընթացների հաշվետվությունները պետք է հրապարակված լինեն ուսանողներին մատչելի ձևաչափով:

Որակի ապահովման գործընթացը ենթադրում է Դեյմինգի ցիկլ, որը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1. պլանավորում,
2. իրականացում,
3. ստուգում,
4. բարելավում:

Կազմվում է փորձագիտական և հետազոտական խումբ, որն էլ հետևում և գնահատում է համալսարանում բարձրագույն կրթության որակական չափանիշները: Հետազոտական խումբն առաջնորդվում է սխեմատիկ քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝



Մենք մեծապես կարևորում ենք ուսանողների ակտիվ միջամտությունն ու մասնակցությունը որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներին, որակի ապահովման գործընթացի վերը նշված բոլոր փուլերին:

**ԲԱԺԻՆ 3.****ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ.  
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Ուսանողակենտրոն ուսուցման շեշտադրումն իրականում առանձնահատուկ կարևորություն ունի՝ ընդգծելով ուսանողների դերը և ակտիվ մասնակցությունը բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործընթացներին, ակտիվ պայքարելու մղումն ու ձգտումը որակյալ բարձրագույն կրթություն ստանալու գործում:

Ուսանողները, գիտակցելով բարձրագույն կրթության արժեքը և ոլորտում առկա բազմաթիվ խնդիրները, պետք է ոչ միայն լինեն պահանջատեր, այլև որակյալ բարձրագույն կրթության կառուցմանը մասնակից՝ այսպիսով ձգտելով առավելագույն գիտելիքներ ձեռք բերել ուսումնական ծրագրերի շրջանակներում և աշխատաշուկայի համար լինել մրցունակ կադր: Ուսանողները սահմանափակված են զուտ դասախոսության շրջանակներում ձեռքբերված գիտելիքներով, ինչի հետևանքով խնդիրներ են ծագում նրանց աշխարհայացքը, գիտակցությունը, մտածելակերպը, ընկալումը և քննադատական մտածողությունը զարգացնելու հարցում: Բուհերը, իրենց հերթին պատասխանատվություն են կրում ուսանողների առաջ՝ պարտավորվելով ապահովել ոչ միայն ՀՀ, այլև եվրոպական չափորոշիչներին համապատասխան բարձրորակ բարձրագույն կրթություն:

Այս համատեքստում կարևոր է շեշտել Եվրոպական ուսանողական միության հետ համագործակցության շրջանակներում Մալթայում ՀՈՒԱԱ պատվիրակության մասնակցությունը QUEST նախագծին: Վերջինս առնչվում է ուսանողակենտրոն ուսուցման շրջանակներում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում ուսանողների դերի բարձրացմանը, ուսանողների շրջանում տեղեկատվության տարածմանը և որպես արդյունք՝ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը: ԵՈՒՄ-ի առաջադրած QUEST նախագծի հիմնական նպատակը ուսանողներին

անհրաժեշտ տեղեկություններով ապահովելն է, ինչն էլ իրականացվում է հետևյալ եղանակներով՝

- 1. ուսանողական հետազոտություններ,*
- 2. ԵՈՄ որակի ապահովման փորձագետ ուսանողների աջակցություն:*

ԵՈՄ-ը ստեղծել է ուսանողակենտրոն մի համակարգ, որն ուղղված է ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությանը, նրանց դերի բարձրացմանը բարձրագույն կրթության որակի ապահովման, կառավարման և վերահսկողության գործընթացներում:

**ԲԱԺԻՆ 4.****ՀՈՒԱԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Տարբեր հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ բուհի շահակիցների ներգրավվածության վերաբերյալ ամենաարդյունավետ մոտեցումը տարբեր մակարդակների լիարժեք ներգրավվածությունն է: Բուհի բոլոր մասնակիցները՝ պրոֆեսորադասախոսական ու կառավարչական անձնակազմը, և ուսանողները պետք է լինեն հաստատության գործունեության անմիջական մասնակիցներ: Ուսանողները, իրենց հերթին, պետք է լինեն ամենաակտիվ ներգրավված կողմը, որովհետև վերջիններս ոչ թե ծառայության սպառող են, այլ հաստատության՝ որակյալ և մրցունակ կրթության տրամադրման գործընթացի մասնակից:

Որակի ապահովման գործընթացներում ուսանողի ներգրավվածության ապահովման արդյունավետությունն ապացուցում է եվրոպական շատ երկրների հաջողված փորձը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում այդ հարցը մնում է չլուծված՝ «թղթի վրա»: Լավագույն դեպքում նկատվում է ուսանողի ձևական մասնակցություն: Սակայն պետք է արձանագրել նաև, որ լիարժեք, արդյունավետ և մասնագիտական մասնակցություն ապահովելու համար չկան սահմանված համապատասխան գործընթացներ կամ չափանիշներ, որոնց հիման վրա պետք է ընտրվի տվյալ բուհի ուսանողության ձայնը ներկայացնող փորձագետ ուսանողը: Գործընթացների թափանցիկությունը և արդյունքների տեսանելիությունը նպաստում են ուսանողների՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավվելու մոտիվացիայի բարձրացմանը: Էական է տարբերել ուսանողի ձևական և ըստ էության մասնակցությունը, քանի որ շատ դեպքերում այն մնում է «թղթի վրա», ինչը նշանակում է, որ բոլոր փորձագետ ուսանողների մասնակցությունը հաստատված է միայն ֆորմալ վավերապայմաններով: Այլ թերացումներ նկատվում են ինստիտուցիոնալ մակարդակում, որն իրականում որակի առանցքն է, և այն հարցերում, թե ինչպես որակի ապահովման

գործընթացը «թարգմանել» ուսանողի համար՝ դարձնելով պարզ և մատչելի:

ՀՈՒԱԱ նախաձեռնությանը իրականացվում է որակի ապահովման բուհական համակարգերում ուսանողի ներգրավվածությանը վերաբերող նախագիծ, որի առաքելություններից մեկը ուսանողի պահանջները մյուս շահակիցներին փոխանցելն է, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ուսանողական լայն զանգվածներին առավելագույն իրազեկության ապահովումը:

Պետք է ասել, որ ուսանողի ներգրավվածությանը, այնուամենայնիվ, կարող են խոչընդոտել որոշ հանգամանքներ, որոնցից մեկը բուհում ուսումնառության կարճ ժամանակահատվածն է: Ամենալիարժեք և նշանակալի արդյունքը կարող է ապահովվել միայն երկարաժամկետ և համակողմանի մասնակցության դեպքում: Այսպես, ոչ բարենպաստ հանգամանք կարող է դիտարկվել այն փաստը, որ որակի ապահովման ազդեցությունը և դրա արդյունքները շոշափելի են դառնում երկարաժամկետ գործընթացի արդյունքում: Այս դեպքում առավել կիրառելի և ստույգ է ուսանողների վրա ՈԱԳ ազդեցության վերաբերյալ դասավանդողների կարծիքների մշտադիտարկումը: Հետադարձ կապի արդյունքներին տեղյակ լինելով՝ թե՛ ուսանողները, թե՛ դասավանդողները հստակ կարող են պատկերացնել գործընթացի արդյունքներն ու ազդեցությունը:

Կարևոր է ապահովել ուսանողների պատրաստվածությունը ՈԱԳ մասնակցելու տեսանկյունից, որի համար անհրաժեշտ է համապատասխան ուսուցման փուլ: Այդ համատեքստում ՀՈՒԱԱ կարևորում է փորձագետ ուսանողների կողմից համապատասխան ուսուցանող-իրազեկող միջոցառումների կազմակերպումը:

Որակյալ կրթությունը կարող է դիտարկվել տարբեր տեսանկյուններից՝ անձնական, մասնագիտական զարգացում, առարկայական ուսուցում, երաշխավորված զբաղվածություն: Որակի ապահովման գործընթացը որակյալ կրթության միակ երաշխիքն

է, բայց, մեր կարծիքով, այն չի կարող ծառայել իր նպատակին առանց անձնական մակարդակում վերաբերմունքի և վարվելակերպի փոփոխության: Որակի ապահովման արդյունավետ մշակույթի հիմքը ներգրավվածությունն է, կրթական համայնքի ընդհանուր պատասխանատվությունը, ինչպես նաև հստակ սահմանված գործընթացները, որոնք ամբողջ բեռը մեկ շահակցի ուսերին չեն թողնում: Ուսանողների ընդհանրացված կարծիքների ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ կարևոր է ուշադրությունը սևեռել ուսուցման որակյալ արդյունք ստանալու, այն է՝ դասապրոցեսի յուրացման մակարդակի, ինչպես նաև դասավանդման և ուսուցման համար պատշաճ միջավայրի ապահովման վրա:

ՀՈՒԱԱ կարծիքով, արտաքին որակի ապահովումը և համապատասխան մարմինները պետք է նպաստեն ներքին համակարգի գործունեությանը, բուհերի համար սահմանված վերջնարդյունքին համապատասխանելու և հասնելու «օգնության ձեռք» լինեն:



## **ԲԱԺԻՆ 5.**

### **ՈւՄԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ**

Սույնով ներկայացնում ենք ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում բարձրագույն կրթության որակի վերաբերյալ ուսանողի դիրքորոշումն ու տեսակետը՝ որպես բարձրագույն կրթության շահակից և պահանջատեր:

ՀՈՒԱԱ արդի խնդիրներից է ուսանողների տեսակետի փոխանցումը ոլորտի մյուս շահակիցներին, այդ թվում՝ ռեկտորատներ, որոշումներ ընդունող վարչական և գերատեսչական համապատասխան կառավարման մարմիններ: Առանձնահատուկ կարևորում ենք ուսանողի իրազեկվածության, ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրման և ուսանողի՝ որակյալ բարձրագույն կրթության հասնելու ճանապարհին մասնակցության կարևորության քարոզչությունը:

ՀՈՒԱԱ կարևորագույն խնդիրներից է բուհերում որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև կառավարման և ուսումնական պլանների մշակման գործում ուսանողի ներգրավվածության բարձրացման շեշտադրումը: Այս համատեքստում մեր առաքելությունն է օժանդակել որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերում և կառավարման գործընթացում ուսանողների դերի բարձրացմանը:

Ինստիտուցիոնալ կառավարող և ղեկավար մարմինները, գիտական և տեխնիկական անձնակազմը, ինչպես նաև ուսանողները և նրանց ներկայացուցիչները պետք է լիովին ներգրավված լինեն կրթական ծրագրի որակի ապահովման, ինչպես նաև պլանավորման, իրականացման և վերանայման գործընթացներում: Արտաքին վերանայման բաժինը պետք է ծրագրի մակարդակով գնահատի ներքին որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը: Ծրագրի մակարդակով որակի ապահովումը անհրաժեշտ է, քանի որ նույնիսկ հաստատությունների միջև չա-

փորձիչները և ընթացակարգերը կարող են տարբեր լինել, ուստի ուսանողները ծրագրի ընտրության ժամանակ պետք է կարողանան հենվել հավաստի և ճշգրիտ տեղեկատվության վրա:

Որակի ինստիտուցիոնալ ապահովումը և գնահատումը հիմնականում բարձրագույն ուսումնական հաստատությունների պատասխանատվությունն է: Որակի ինստիտուցիոնալ ապահովումը մեծ կարևորություն ունի, քանի որ այն նպաստում է կրթական հաստատություններում որակի բարձրացմանը՝ ի նպաստ բարձրագույն կրթության ոլորտի բոլոր շահառուների: Հետևաբար այս ինստիտուցիոնալ գնահատումը պետք է լինի ավելին, քան պարզապես ակադեմիական տրամադրման բովանդակություն և ստանա կառույցների, ինչպիսիք են գրադարանի և SS ռեսուրսների, դասախոսների աջակցությունը և ուսանողների մասնակցությունը:

Գործընթացի առաջին քայլը որոշում ընդունող մարմինների կողմից առաքելության և նպատակների սահմանումն է: Ուսանողի համար ուսումնական մոտիվացնող միջավայրի ստեղծումը պետք է լինի այդ նպատակների և առաքելության հիմքում: Ուսանողները մի տարասեռ խումբ են (խոսքը վերաբերում է գենդերային, կրոնական պատկանելությանը, սոցիալական ծագմանը կամ իրավիճակային սահմանված հաշմանդամությանը), ուստի սահմանված բոլոր նպատակներն ու առաքելությունները պետք է այս տարասեռությունը հաշվի առնեն բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների համար մատչելի և կայուն պայմաններ ապահովելիս: Որակի զարգացումն ու գնահատումը բուհական մակարդակում և որակի հավաստիացումն ու հավատարմագրումը ծրագրային մակարդակում որակի բարձրացման բանալիներն են:

Հայաստանյան բուհերին հավատարմագրում է ՈԱԱԿ-ը, իսկ ԿԳ նախարարությունը այս գործընթացում դիտորդի դերում է հանդես գալիս և որոշումներ կայացնող չէ: Միաժամանակ՝ մասնագիտական կրթության «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը բուհերը հավատարմագրելիս հանդիպում է մի շարք համընդհանուր խնդիրների, որոնցից են՝

- Հայաստանյան բոլոր բուհերը խնդիր ունեն դասընթացների ընտրության և կազմակերպման հարցում, ինչն առնչվում է թե՛ դասախոսական կազմին, թե՛ դասախոսության մատուցման ձևերին:
- Ուսանողների մոտիվացիայի պակաս: Ուսանողները կարծես շահագրգռված չեն բարձրորակ կրթության ձեռքբերման գործում, այնինչ իրենք են առաջին պահանջատերերը:
- Հայաստանյան բոլոր բուհերը ունեն կառավարման խնդիր: Բուհի կառավարման համապատասխան մարմնի, տվյալ օղակի ներկայացուցիչները իրենց գործառնություններն ու պարտականությունները պատշաճ չեն կատարում:
- Դիմորդի ընտրած մասնագիտության անտրոշությունը: Դիմորդը ընդունվում է բուհ կամ ծնողների թելադրանքով, կամ սեփական նախաձեռնությամբ, սակայն տեղյակ չէ, թե ինչ մասնագետ պետք է դառնա ապագայում:
- Ավագ դպրոցներում պետք է տեղակայված լինեն կարիերայի համապատասխան կենտրոններ, որոնք դիմորդներին կկողմնորոշեն ապագա մասնագիտության ընտրության հարցում:
- Ուսանողը՝ որպես բարձրագույն կրթության շահակից պետք է իր հերթին տեղյակ լինի, թե ինչ է առաջարկում տվյալ բուհը: Դրանով իսկ ուսանողը իրազեկված կլինի և դժվարությունների առջև չի կանգնի՝ հետագայում աշխատանքի ընդունվելու հարցում:
- Որպես նախաձեռնող և պահանջատեր՝ ուսանողը պետք է, իր հերթին, պահանջի սեփական իրավունքների ապահովում՝ միաժամանակ չանտեսելով սեփական պարտականությունները:

Ուսանողները ունեն կրթության որակի ապահովման հետ կապված լրջագույն խնդիրներ, և պետք է որոշակի փոփոխություններ և միջոցառումներ իրականացվեն ինչպես համալսարանական, այնպես էլ կառավարության մակարդակով:

**ԲԱԺԻՆ 6.****ՈՒՄԱՆՈՂԻ ՄՈՂԵԼ. ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ  
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՋԸ**

ՀՈՒԱԱ իրականացնում է հասարակական լուսմներ, որոնց արդեն մասնակցել է շուրջ 200 հոգի: Դրանց ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության ոլորտի բազում խնդիրներ՝ սկսած առկա կոռուպցիայից, ոչ բավարար պատրաստվածության մակարդակի դասախոսական կազմից, ոչ հարիր մասնագիտական գրականությունից մինչև քննության անցկացման կարգն ու ուսանողների մոտիվացիայի պակասը:

Ուսանողների կարծիքով, որակյալ բարձրագույն կրթություն ունենալու ճանապարհին հիմնական խոչընդոտներն ու թերություններն են.

*1. Դասավանդման թերացումներ*

Հետազոտության ընթացքում բացահայտեցինք ուսանողների կարծիքը հիմնական թերացումների վերաբերյալ: Դրանք հիմնականում վերաբերում էին դասախոսությունների սխալ մատուցմանն ու դասավանդման թերի մեթոդներին, դասավանդվող առարկաների համապարտադիր լինելուն (այնինչ Բոլոնյան համակարգի սկզբունքների համաձայն առարկաների մի մասը պետք է լինի ընտրովի, ըստ ցանկության), լիարժեք ու մասնագիտությանը համարժեք գրականության սակավությանը կամ բացակայությանը, թեստային համակարգի թերացումներին, կրթական ծրագրերի սխալ բաշխմանը, գնահատման սուբյեկտիվությանը, օտար լեզվի ոչ լիարժեք ուսուցմանը:

*2. Կոռուպցիա*

Ուսանողները հատուկ ընդգծել են բուհերում առկա հովանավորչությունը՝ ծանոթ-բարեկամ կապերի առկայությունը և կաշառակերությունը, որի արդյունքն է ուսանողների միջև անարդար

մրցակցությունը: Ուսանողները ընդգծում են վարչական թերացումների արդյունք հանդիսացող բոլոր գործընթացների բյուրոկրատացումը: Ուսանողները շեշտել են նաև ինքնավարության բացակայության խնդիրը թե՛ բուհական մակարդակում, թե՛ ուսանողական:

### 3. Ուսանող

Ուսանողները ընդգծում են այն փաստը, որ իրենք բավարար մոտիվացիա չունեն բուհում առավելագույնս դրսևորվելու, որը հանգեցնում է անտարբերության ու կրթության հանդեպ անլուրջ վերաբերմունքի: Այս համատեքստում անհրաժեշտ է ուսանողների խրախուսման միջոցների կիրառում, այդ թվում՝ վարձավճարների նվազեցման տեսքով:

Բուհերի ուսանողները խիստ տարբերվում են նաև իրենց գիտելիքների մակարդակով, ինչը վկայում է դասավանդման, յուրացման և գնահատման խստության պակասի մասին:

Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ուսանողների շրջանում առկա է տեղեկացվածության, իրազեկվածության պակասի խնդիր, ինչն էլ ինքնաբերաբար հանգեցնում է ուսանողի՝ բարձրագույն կրթության յուրաքանչյուր բնագավառում մասնակցության նվազմանը:

Մեր ուսանողները առերեսվում են սոցիալական և կենսամակարդակի լուրջ խնդիրների, ինչը նույնպես մեծապես ազդում է բարձրագույն կրթության որակի և վերջնարդյունքի գնահատման վրա:

### 4. Բուհ

Բուհերում նույնպես առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք, ըստ ուսանողների, խոչընդոտում են որակյալ կրթության մատուցմանը: Առանձնացված հիմնախնդիրները հիմնականում

վերաբերում են ենթակառուցվածքների թերությանը, վարչական թերացումներին, պրոֆետրադասալսոսական մասնագիտական հմտությունների պակասին, ինչպես նաև արտաքին միջավայրից սպառնալիքներին, որը դրսևորվում է բուհի քաղաքականացվածության միջոցով: Ուսանողները հատուկ ուշադրություն են դարձրել պրակտիկայի կազմակերպման անարդյունավետությանը, որը հանգեցնում է բուհ-գործատու անարդյունավետ կապին, ինչպես նաև ուսանողի նկատմամբ անհատական մոտեցմանը, մինչդեռ այդ կապերի արդյունքում է բարձրանում ինքնագիտակցությունը:

Մեր ուսումնասիրության ընդհանրացված արդյունքները վկայում են, որ բարձրագույն կրթության ոլորտում ուսանողական համայնքն ունի հետևյալ բարեփոխումների կարիքը, որոնք պետք է հանգեցնեն որակյալ կրթությանը:

#### 4. *Կրթական*

Այս բնագավառում ուսանողի կրթությունը առավելագույնս արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել գնահատման համակարգի թափանցիկություն (արդարացիություն), խորը և համապարփակ մասնագիտական կիրառական գիտելիքներ, գիտահետազոտական նյութեր, արդի որակյալ գրականություն: Ուսանողները պետք է իրազեկ լինեն և կարողանան տեր կանգնել իրենց իրավունքներին, ինչպես նաև պետք է առկա լինեն համապատասխան հարցերով զբաղվող մարմիններ: Ցանկացած ոլորտին վերաբերող տեղեկատվության տարածումը պետք է լինի առաջնայնություններից մեկը (շարժունություն, որակի ապահովում): Գործատու-բուհ կապի ամրապնդումն ավելի քան կարևոր է ուսանողների ապագան ապահովագրելու համար: Բացի այդ, ուսանողները կարևորել են հետևյալ հիմնախնդիրները՝

- մասնագիտությունների ցանկի վերանայում,
- հետազոտական աշխատանքներին մասնակցություն,
- զեղչերի և խրախուսման համակարգերի ներդրում,
- օտար լեզուների անվճար ուսուցում,

- դասախոսի և առարկաների ընտրության հնարավորություն,
- կուրսի կոորդինատորներ (ոչ դասախոս):
- կրթաթոշակի բարձրացում:

### 5. *Սոցիալ-փնտրեսական*

Ուսանողները՝ որպես հասարակության ամենախոցելի խավերից մեկը, սոցիալական հատուկ պաշտպանության կարիք ունեն: Այդ առումով հատուկ պայմաններ պետք է ստեղծվեն հետևյալ բնագավառներում.

- ✓ մատչելի կացարաններ,
- ✓ ֆինանսական աջակցություն,
- ✓ հանգիստ (ոչ ֆորմալ կրթության, ժամանցի սենյակներ),
- ✓ մատչելի տրանսպորտ,
- ✓ տեխնիկական զինվածություն (ընթերցասրահ, համակարգիչներ, լաբորատորիաներ, գրադարան, բուֆետ, անվճար պատճենահանման սարքեր):

Այսօր բուհերում առկա է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության խնդիր, ինչի հետևանքով ուսանողները ստիպված են լինում սեփական միջոցներով ձեռք բերել մասնագիտական պարագաներ, որոնք կապահովեն դասապրոցեսի լիարժեք յուրացումը: Ուսանողին մատուցվող ծառայությունների մատչելիությունը նպաստում է վերջիններիս՝ տարբեր բնագավառներում լայն ընդգրկվածությանը:

Ուսանողների թե՛ սոցիալական խնդիրները, թե՛ ֆինանսավորումը պետք է լուծվեն մասնավոր և պետական հատվածների միասնական ներգրավման ճանապարհով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Որակյալ բարձրագույն կրթությունը համարվում է գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծման հիմնաքարը: Որակյալ մասնագետները բերում են առողջ, զարգացած ու կիրթ քաղաքացիական հասարակության, որն էլ ապահովում է կենսամակարդակի աճի կայուն տեմպեր ու բարեկեցիկ կյանք: Բարձրորակ աշխատատեղերը ապահովում են զբաղվածության բարձր մակարդակ, որն էլ կարող է հանգեցնել արտագաղթի կանխմանը:

Ներկայացնելով ՀՈՒԱԱ դիրքորոշումը՝ կարող ենք եզրակացնել, որ որակյալ բարձրագույն կրթության ապահովումն ունի ազգային անվտանգության ապահովման նշանակություն, քանզի այն նպաստում է տնտեսության բոլոր բնագավառների աշխուժացմանը և ապահովում տնտեսական դինամիկ աճ, ինչպես նաև խթանում գիտատեխնիկական առաջընթացը:

Որակյալ բարձրագույն կրթությունը նպաստում է ուսումնամեթոդական ծրագրերի մշակմանը, ուսանողների մասնակցությանը: Այդ պարագայում ուսանողն ընկալվում է ոչ միայն որպես բարձրագույն կրթության համար վճարող, այլև կարևորագույն շահակից և պահանջատեր: Այսպիսով հնարավոր կլինի ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետների որակ, միջազգային շարժունություն, որը փորձի փոխանակման և միջազգայնացման լավագույն ուղին է: Որակյալ բարձրագույն կրթությունը երիտասարդության շրջանում ձևավորում է քննադատական միտք և վերլուծական մտածելակերպ:

Այսպիսով, լինելով ուսանող, պետք է ձգտենք պայքարել բարձրորակ կրթության ձեռքբերման, դասապրոցեսում արդյունավետ դասավանդման մեթոդների ներդրման, մեր մտածելակերպի և գիտակցության բարձրացման համար: Ցանկանալով ինտեգրվել եվրոպական քաղաքակրթությանը՝ պետք է լինենք այն ազդակն ու մղիչ ուժը, որով կնպաստենք հայ իրականության մեջ գաղափարական դաստիարակության զարգացմանը:





# ՄԱՍ II

ՈՐԱԿ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

QUALITY

+

=

}

]

F12

## 1. ԻՆՉ Է ՈՐԱԿԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակը մի հասկացություն է, որ հաճախ է հանդիպում կրթության ոլորտում, սակայն ոչ միշտ է լավ ըմբռնելի: Այն կարող է տարբեր նշանակություն ունենալ կախված երկրից, հաստատությունից և անգամ այն մարդուց, ում հետ զրուցում եք: Որակը կարելի է տարբեր կերպ սահմանել: Տվյալ բաժնում մենք կքննարկենք, թե ինչ է նշանակում «որակ» և դրա ազդեցությունը կրթական փորձի վրա, ինչպես նաև կտրամադրենք որոշ տեղեկություններ, որոնք ոչ միայն կօգնեն գնահատել կրթության որակը, այլև խոսել ուրիշների հետ որակի մասին:

### ՈՐԱԿՅԱԼ ՓՈՐՁ

Գոյություն չունի լավագույն ուսանողական փորձի ճշգրիտ և հստակ սահմանում: Առկա է հարուստ գրականություն ուսուցման, դասավանդման և գնահատման բոլոր դրույթների վերաբերյալ: Եթե լինել կատարյալ ուսանողական փորձ, անկասկած, որևէ մեկն այն արդեն կրկնօրինակած կլինել: Ուսանողական փորձի կառուցվածքը ազդեցություն է կրում և կախված է բազմաթիվ դրույթներից: Նշենք միայն մի քանիսը. քաղաքականություն և գաղափարախոսություն, մշակույթներ, մանկավարժական հետազոտություններ, համալսարաններին հասանելի միավոր ռեսուրսներ, ազգային և միջազգային տնտեսական պահանջներ, սոցիալական քաղաքականություն, ուսանողական մասնակցության և կրթության միտումներ:

Մի շարք կարծիքների օրինակներ, որոնք կարող էին ազդել որակի մոտեցմանը, ներառում են հետազոտություններ, թե ինչն է ձևավորում պատշաճ, որակյալ ուսանողական փորձը:

Միգուցե դժվար է հասկանալ, թե որ գործոններն են մասնակցում որակյալ փորձի ձևավորմանը, սակայն այն արժանի է

վերին օղակի ներկայացուցիչների կատարած ջանքերին և օգտակար՝ նրանց կարծիքներն ավելի լայն շրջանակներում ներդնելու և հաստատութենական կառավարիչների ու քաղաքականություն մշակողների հետ որակի վերաբերյալ քննարկումների ժամանակ: Այնուամենայնիվ, չի կարելի ենթադրել, թե ուսանողների մեծամասնությունը տեղյակ է որակյալ ուսուցման ստեղծմանը, արդյունավետ գնահատմանը, աշխատունակության զարգացմանը կամ ուսանողների բազմազան կարիքների բավարարմանն առնչվող հետազոտություններին, ինչպես նաև, որ նրանք ամբողջապես ըմբռնում են որակի վերաբերյալ բազմազան փիլիսոփայական մոտեցումները, թեև բոլոր ուսանողներն ընկալում են իրենց սեփական փորձն ու դրա առնչությունը որակի տարբեր ասպեկտներին:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գոյություն ունեն բազմաթիվ եղանակներ, որոնց միջոցով կարող ենք կրթությունը դիտարկել տարբեր չափանիշների տեսանկյունից: Ամենաակնհայտ եղանակը ձեր ստացած որակավորման չափանիշն է: Կան նաև չափանիշներ, որոնք պարտադրված են համալսարաններին արտաքուստ, ինչպիսիք են օրենսդրական նորմերը կամ ֆինանսավորող մարմինների սահմանած չափանիշները:

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Որակավորման չափանիշները պետք է լինեն 'նույնը՝ անկախ որակից և փորձի ձևից, որ դուք ստանում եք: Այսպես, քիմիայի բաժնին տրվող չափանիշները պետք է նույնը լինեն և համապատասխանեն պատմության բաժնին տրվող չափանիշներին: Նույն կերպ, քիմիայի բաժնին տրվող չափանիշները պետք է նույնը լինեն տարբեր համալսարաններում: Այնուամենայնիվ, եթե որակավորման չափանիշները պետք է նույնը լինեն, ապա որակավորումները տարբեր համալսարաններում կլինեն տարբեր: Այսպես՝ հա-

մալսարաններից մեկում քիմիայի աստիճանը կարող է հիմնված լինել տեսական և գիտական հետազոտությունների վրա, մինչդեռ մյուսում կարող են ավելի նշանակալից լինել կիրառական գիտությունները և արդյունաբերությունը: Երկուսն էլ կարող են ունենալ նույն չափանիշները, բայց հանգեցնել տարբեր տիպի փորձի:

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Թվում է, թե հեշտ է ասել, որ որակավորման չափանիշները պետք է լինեն նույնը անկախ հանգամանքներից, սակայն մարդիկ կարող են ունենալ տարբեր պատկերացումներ այդ առնչությամբ, որակավորման չափանիշների վերաբերյալ մեծ քննարկում առկա է ոչ միայն համալսարաններում, այլև կրթության բոլոր մակարդակներում:

Ոմանք կարծում են, որ կան լավ համալսարաններ և ոչ այդքան լավ համալսարաններ, հետևաբար նաև լավ կամ պակաս լավ որակավորումներ: Այս պատկերացումները ոչ միշտ են համապատասխանում որակավորման չափանիշներին կամ ուսանողական փորձի որակին: Նման տարբերակումները կարող են որոշ համալսարաններ բարձր դասել մյուսներից, բայց արդյո՞ք որակավորման չափանիշները տարբերվում են:

Գործատուները և հասարակությունը, ընդհանուր առմամբ, կարող են իրենց կարծիքները հայտնել որակավորման չափանիշների վերաբերյալ: Իսկ ի՞նչ եք կարծում դուք, երբ մամուլում պատմություններ եք տեսնում չափանիշների անկման մասին: Որակի մասին պատկերացումները ազդում են որակավորման չափանիշների վերաբերյալ մարդկանց տեսակետների վրա, բայց այս մտքերը միշտ չէ, որ ճիշտ են: Կարծիքները նաև կախված են մի շարք այլ գործոններից, որոնցից մի քանիսին կանդրադառնանք այս ձեռնարկի հետագա բաժիններում, իսկ մնացյալը վերաբերում է հեղինակության հարցերին: Որակավորման չափանիշների մասին ընկալումները կարող են ունենալ կարևոր, սակայն ոչ միշտ ցանկալի ազդեցություն որակավորման կարգավիճակի վրա և հետևաբար

կարող են ազդել սոցիալական շարժունության ու հավասար հնարավորություններին առնչվող խնդիրների վրա:

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Տարբեր համալսարաններ և երկրներ կարող են ունենալ որակավորման չափանիշներին հետևելու երաշխավորման տարբեր եղանակներ: Օրինակ՝ որոշ երկրներ կարող են կիրառել ստուգումների համակարգ, որով գնահատվում է ուսուցման յուրաքանչյուր կուրսը՝ պարզելու, թե կիրառվում են արդյոք որակավորման համապատասխան չափանիշները: Մյուս երկրները կարող են գործել կանոնակարգված կամ հավասար գնահատման համակարգով, ինչպիսին է արտաքին ստուգումների համակարգը:

Բոլոնիայի հռչակագիրը ստորագրվել է 1999թ.-ին Եվրոպայի 29 քաղաքների կրթության նախարարների կողմից համաձայնեցված և փոխկապակցված Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ստեղծելու նպատակով: Համաձայնեցված նպատակները նպաստում են ուսանողների շարժունության ընդլայնմանը ողջ Եվրոպայում՝ ներառելով քայլեր, որոնք աջակցում են որակավորման չափանիշների համատեղելիության և համապատասխանեցման բարձրացմանը Եվրոպայում:

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Որակավորման չափանիշը համալսարանական փորձի **ելքային բնութագրիչն** է: Գոյություն ունեն նաև **մուտքային բնութագրիչներին** վերաբերող չափանիշներ, ինչպես նաև համալսարանը գնահատող չափանիշներ, ինչպիսիք են օրենսդրական և/կամ ֆինանսավորմանը վերաբերող նորմերը: Օրինակ՝ գոյություն ունեն օրենքով նախատեսված պահանջներ հավասարության և բազմազանության ասպեկտների կամ բնապահպանական գործոններ:

րի վերաբերյալ: Ֆինանսավորումը կարող է կախված լինել նաև համալսարանից՝ պայմանավորված որոշակի ուսանողների հավաքագրումով: Թվարկվածները չափանիշների օրինակներ են, որոնց պետք է համապատասխանեն համալսարանները:

Կարող են լինել նաև այլ չափանիշներ: Որոշ երկրներ կարող են սահմանել չափանիշներ, որոնք վերաբերում են դասարանների չափերին, գնահատման մեթոդներին կամ ուսուցիչների որակավորումներին: Ինչևէ, քանի որ կրթությունն ավելի է, քան մուտքային կամ ելքային բնութագրիչների միջին արժեքը, մնացած չափանիշները կարող են լինել ավելի բարդ:

Կարող են լինել **կանոնագրքեր** կամ **թիրախային (բենչմարքային) դրույթներ**, որոնք ընդգծում են հստակ գործունեության, ուսանողական փորձի կամ առարկայի ասպեկտների համաձայնեցված ստանդարտները: Տվյալ կանոնագրքերը կամ թիրախային դրույթները կարող են սահմանվել, ինչպես նաև համապատասխանեցվել ազգային համալսարանական համայնքի կողմից: Դրանք առաջարկում են մի շարք սկզբունքներ կամ ցուցանիշներ, այլ ոչ թե խիստ սահմանված չափանիշներ:

Եվրոպական չափանիշները և ուղեցույցները չափանիշի տեսակներ են, որոնք առաջարկում են համաձայնեցված սկզբունքների շարք, թե ինչպես պետք է հաստատությունները վերահսկեն չափանիշները և վերանայեն իրենց տրամադրած որակը ողջ Եվրոպական միությունում:

Որոշ չափանիշներ որոշ համալսարաններում կարող են լինել ներքին: Օրինակ՝ համալսարանը կարող է չափանիշ սահմանել, որ բոլոր գնահատված աշխատանքները վերադարձվեն որոշակի սահմանված ժամկետում, կամ որ ուսուցիչները կամ գիտական անձնակազմը պետք է ուսանողներին առաջարկեն շփման նվազագույն ժամեր:



## **ՈՐԱԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՁԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Գիտե՞ք արդյոք ձեր ուսումնական հաստատությունում կիրառելի չափանիշների մասին: Փորձե՞ք պարզել ավելին՝ համեմատելով, թե արդյոք հետևյալ դրույթները բավարարված են ձեր հաստատությունում:

### **Հիշե՛ք չափանիշների հետևյալ օրինակները.**

- որակավորման չափանիշներ,
- մասնագիտական մարմինների սահմանած որակավորման չափանիշներ,
- դասավանդման չափանիշներ,
- ազգային կազմակերպություններ, որոնք գնահատում են կրթական չափանիշները,
- օրենսդրական շրջանակներ,
- ֆինանսավորող մարմիններ, որոնք կարող են սահմանել չափանիշներ:

## **ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ «ՈՐԱԿԸ». ԻՆՔՆԱԹԻՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Տվյալ համառոտ համեմատությունը կարող էք կիրառել ուսանողներին կրթության որակի մասին որոշ հիմնարար գաղափարներ ներկայացնելու համար:

Կրթության որակի մասին խոսելիս մենք օգտագործում ենք բազմաթիվ եզրեր, ինչպիսիք են չափանիշները, որակի բարելավումը և ուսանողների ներգրավվածությունը:

Կարող ենք ներկայացնել տվյալ եզրերն ինքնաթիռի հետ համեմատության միջոցով: Ինքնաթիռը նման է համայնքի, որին ծանայում է հաստատությունը կամ հաստատությունների ազգային

խումբը: Համայնքը շարժվում է առաջ դեպի իր նպատակն այնպես, ինչպես ինքնաթիռը:

Ինչն է առաջ մղում ինքնաթիռը: Նրա շարժիչները, բաղկացուցիչ այլ մասերը, որոնց միջոցով ինքնաթիռը մնում է օդում և շարժվում դեպի նպատակները: Սակայն ինչն է առաջ մղում համայնքները: Կրթությունը, որը իրագրվում է համայնքը ձևավորող մարդկանց և թույլ տալիս հասնել իրենց նպատակներին: Համայնքը օգտագործում է քոլեջների և համալսարանների նման հաստատությունները իրեն կրթելու և առաջ մղելու համար:

Ինքնաթիռի շարժիչը բաղկացած է բազմաթիվ մասերից՝ օդամղիչներ, ճնշման տուրբիններ, այրման խցիկներ: Նույնը վերաբերում է կրթությանը, որը բաղկացած է հետևյալ մասերից՝

- ուսումնական պլան,
- ուսուցման նյութեր,
- ուսուցման և դասավանդման գործընթաց,
- գնահատումներ և դրանց արձագանքներ,
- ուղղորդում և աջակցություն,
- ուսանողների առաջընթաց ու ձեռքբերումներ,
- որակի բարելավում և ապահովում:

Շարժիչները, որպես համակարգեր, պետք է կառուցված լինեն որոշակի չափանիշների հիման վրա: Չափանիշներ ասելով պետք է հասկանալ կրթության մակարդակը, որն անհրաժեշտ է հասնելու այն որակավորմանը, որի համար դուք սովորում եք:

Որպեսզի համոզվեն, որ շարժիչները համապատասխանում են որոշակի չափանիշների, ճարտարագետները պետք է կատարեն անհրաժեշտ բոլոր ստուգումներն ու գործընթացները՝ ապահովելու, որ բոլոր մասերը ճիշտ և պատշաճ են աշխատում: Ահա թե ինչպես են նրանք երաշխավորում, որ ինքնաթիռը չի ընկնի և կհասնի իր նպատակին:

Ահա, թե որն է որակի ապահովումը: Հաստատությունները շարունակաբար հարց են բարձրացնում, թե ինչպես համոզվել,

որ իրենց ուսանողների ուսուցման փորձը համապատասխանում է նրանց սահմանած չափանիշներին: Այսպիսով, նրանք ստուգում են դրա յուրաքանչյուր հատվածը՝ համոզվելու, որ համակարգը պատշաճ է աշխատում,և ձեր որակավորումը հնարավորություն կտա հասնելու ձեր նպատակին:

Համոզվելով, որ շարժիչները պատշաճ են աշխատում, ճարտարագետները շարունակում են բարելավել ու զարգացնել դրանք՝ դարձնելով ավելի արագ, ապահով ու արդյունավետ: Նույնը վերաբերում է նաև կրթական հաստատություններին: Այս գործընթացը կոչվում է որակի բարելավում, որի հիմնական նպատակը ուսման փորձի բարելավումն է, որը հնարավորություն կընձեռի ուսման ընթացքում ստանալ առավելագույն արդյունք:

Ինքնաթիռի աշխատանքը բավականին հեշտ է ստուգել: Եթե շարժիչը չի աշխատում, ապա ինքնաթիռը վայր կընկնի: Եվ երբ դուք կնախագծեք նոր շարժիչ, աշխատանքը ստուգելու համար կանցկացնեք բազմաթիվ թեստեր: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր ստուգել ուսման փորձը: Այս հարցին կարող են պատասխանել ուսանողները, քանի որ նրանք են հաճախում դասընթացներին: Ահա թե ինչու չափազանց կարևոր է ուսանողների՝ որակի ապահովման ու որակի բարելավման գործընթացին ներգրավվածության ապահովումը:

## **ՈՐԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ. ՀԱՐՑԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

Ո՞ր գործընթացներն են հավաստում, որ որակավորումների չափանիշները նույնն են ձեր համալսարանում:

Ո՞ր գործընթացներն են հավաստում, որ որակավորումների չափանիշները նույնն են ձեր տարածաշրջանի կամ երկրի համալսարաններում:

Արդյո՞ք ուսանողները վստահում են ձեր հաստատությունում առկա որակի ապահովման չափանիշներին: Եթե ոչ, ապա արդյո՞ք

պատճառը դրանց անհամապատասխանությունն է համաձայնեցված չափանիշին:

Ինչպևն կարող եք ներկայացնել ձեր հաստատությունում առկա որակի չափանիշների վերաբերյալ ձեր տեսակետները:

Ինչպևն կարող եք բարձրաձայնել ձեր կրթության որակի հետ կապված հարցերը:

Կարո՞ղ եք արդյոք բարձրացնել տվյալ հարցերը համալսարանական եթերի միջոցով, թե՛ դրանք ազգային մակարդակի խնդիրներ են:

Ազգային կրթական քաղաքականությունում առկա են արդյոք որոշակի ասպեկտներ, որոնք բերում են այդ անվտանգությանը: Եթե այո, ապա կարո՞ղ եք արդյոք բարձրացնել ձեր մտահոգությունը ուսանողական ազգային միությունում, որպեսզի նրանք ազդեն ազգային քաղաքականություն մշակողների վրա:

## **ԱՊԱՀՈՎՈՒՄ ԸՆԴԴԵՄ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ**

Կրթության որակի վերաբերյալ քննարկումների ժամանակ հաճախ կարող եք հանդիպել երկու հասկացությունների՝ որակի ապահովում և բարելավում:

Որակի ապահովումն արդեն համաձայնեցված չափանիշ է, համաձայնեցումը սովորաբար կատարվում է ազգային մարմնի հետ, որով սահմանվում են ուսումնական ծրագրի ավարտին կրթական աստիճան ստանալու համար բոլոր անհրաժեշտ պահանջները:

Որակի բարելավումը գործընթաց է, որն ուղղված է ուսումնական դասընթացների որակի բարելավմանը և ուսանողների ուսուցման փորձի դրական ազդեցության ապահովմանը:

Որակի ապահովման դրույթները կարող են գնահատել հաստատություններն ըստ սահմանված բազմաթիվ չափանիշների, որոնք քննարկվել են նախորդ բաժիններում: Կարող են գնահատ-

վել նաև այն գործընթացները, որոնց միջոցով հաստատությունները ապահովում են չափանիշների կատարումը: Մրանով բացատրվում է, որ որակի ապահովման եղանակները ևս կարող են տարբեր լինել:

Որակի բարելավումը ոչ միայն ստուգում է այդ չափանիշների կատարումը, այլև ստեղծում անհրաժեշտ միջավայր, որտեղ ընդհանուր նպատակն ուսանողների փորձի լավագույն արդյունքի ապահովումն է: «Որակի ապահովում ընդդեմ բարելավման» մոտեցումը կարող է ազդել հաստատության կամ երկրի որդեգրած պայմանավորվածությունների բնույթի վրա:

Վերջին տարիներին ուսանողները հասել են մեծ առաջընթացի՝ երաշխավորելով իրենց դերակատարությունը որակի ապահովման ու բարելավման արտաքին ու ներքին գործընթացներում: Սակայն անհրաժեշտ է համոզվել, որ ուսանողները ոչ միայն գործընկերներ են այդ գործընթացներում, այլև ի վիճակի են մեկնաբանել իրենց փորձի որակը: Տվյալ ձեռնարկի հետագա բաժիններում կքննարկենք որակի ապահովումն ու բարելավումը և ուսանողների դերակատարությունը պաշտոնական որոշակի գործընթացներում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չափանիշները ուսանողական փորձի որակի մաս են կազմում, բայց բարձրորակ փորձը կախված չէ միայն չափանիշների կատարումից: Գոյություն ունեն ուսուցման ու դասավանդման բազմաթիվ եղանակներ ու մոտեցումներ, որոնք օգնում են ձևավորել պատշաճ որակյալ ուսանողական փորձ:

Որակյալ բարձրագույն կրթությունում առկա են նաև որոշակի դրույթներ, որոնք մուտքային կամ ելքային բնութագրիչների պարզ խնդիրներ չեն: Որակի որոշ համակարգեր դեռևս փորձում են գնահատել, թե ինչպես են բավարարվում որակի ավելի ընդգրկուն ցուցանիշները: Այդպիսի դրույթների շարքին են դասվում ուսանողների ներգրավվածությունը, աշխատունակությունը, ինչպես նաև սոցիալական շարժունությունը, ազգային բարեկեցությունն ու գիտելիքների ստեղծումը:

Սակայն, բոլոր ուսանողներն էլ փորձագետներ են և հասկանում են, թե ինչն է ձևավորում պատշաճ որակյալ փորձը, և նրանք բոլորն էլ կարող են մեկնաբանել իրենց փորձի որակն ու հանդես գալ որպես գործընկերներ փորձի զարգացման գործում:


## 2 .ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՐՁ

Ուսանողների ուսուցման փորձը կարող է կիրառվել մի շարք եղանակներով.

- ուսանողական ներկայացուցիչների կրթություն,
- ուսանողների աշխատանքային հանդիպումների և նիստերի օրակարգային կետերի քննարկում,
- այլ ուսանողների հետ սեփական ուսանողական փորձի վերաբերյալ գրույց,
- ուսանողների տեսակետների հավաքում՝ որպես ներդրում պաշտոնական վերանայման գործընթացներում:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՐՁ

Ինչ է ուսանողների ուսուցման փորձը: Այն ամենն է, ինչ վերաբերում է ուսուցման ու դասավանդման գործընթացներին: Ուսանողների ուսուցման փորձը կարելի է բացատրել ստորև ներկայացված գծապատկերում իր 7 տարրերի միջոցով:



## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՐՁ. ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ

Ուսանողների ուսուցման փորձի տարրերից յուրաքանչյուրը կարելի է ուսումնասիրել հետևյալ հարցերի օգնությամբ:

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԼԱՆ

- Կարծում եք արդյոք, որ դասընթացը ձեզ ավելի աշխատուսակ է դարձնում:
- Ինչպե՞ս է կազմակերպված դասընթացը:
- Ինչքանո՞վ է պարզ ժամանակացույցը:
- Տրամադրված է արդյոք ուսումնական պլանի ուրվագիծը:
- Արդյո՞ք դասընթացները օգտակար են:
- Ուսումնական ծրագիրը համապատասխանում է ձեր սպասումներին:
- Ուսումնական սպասումները հստակ ուրվագծված էին:
- Գո՞հ եք արդյոք առաջարկված մոդուլ տարբերակներից:
- Ինչպե՞ս են կազմված մոդուլները:
- Արդյո՞ք դասընթացը դժվար էր:

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Հասանելի են արդյոք ձեզ անհրաժեշտ նյութերը, օրինակ՝ գրքեր, լաբորատոր սարքավորումներ և այլն:
- Արդյո՞ք առկա սարքավորումները համապատասխանում են ձեր սպասումներին:
- Հասանելի են եղել դասախոսության նյութերը:
- Արդյո՞ք ունեք հասանելիություն գործնական դասընթացների անհրաժեշտ ռեսուրսներին:
- Տեղյակ եք արդյոք, թե ինչպես է պետք օգտագործել ձեզ անհրաժեշտ ռեսուրսները:



## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- Ձեր դասընթացի ընթացքում բավականաչափ եք կիրառել ձեր հմտությունները:
- Կարող եք արդյոք ուսանել ձեզ հարմար եղանակով:
- Ինչպե՞ս կգնահատեիք ուսուցումը:
- Կան արդյոք ուսուցման այլ եղանակներ, որ կցանկանայիք ավելացնել դասախոսությունների ու սեմինարների շարքին:
- Արդյո՞ք դասախոսությունները տեղեկատվության տարածման բավարար եղանակ են:
- Արդյո՞ք ձեր սեմինարների չափաքանակը նպաստում է ձեր հետագա ուսուցմանը:
- Կարծո՞ւմ եք, որ ուսումնական ծրագիրը բավականաչափ է ձեզ պատրաստել գնահատմանը:
- Ուսուցման նյութերը համապատասխանո՞ւմ են ժամանակակից պահանջներին:
- Հասկանո՞ւմ եք արդյոք դասախոսությունների բովանդակությունը:

## ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

- Արդյո՞ք գնահատումը արդարացի և պատշաճ կերպով է ներկայացնում դասընթացի բովանդակությունը:
- Դասընթացը արդարացի՞ էր գնահատվում:
- Բոլոր դասախոսները գնահատում են միևնույն չափանիշի համաձայն:
- Արդյո՞ք ստացել եք բավարար արձագանք ձեր գնահատումից:
- Ստացված արձագանքը արդյունավետ էր:
- Արդյոք շատ են քննություններն ու գնահատումները:

- Ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում կուրսային աշխատանքները և գնահատումները յուրաքանչյուր մոդուլում:
- Գնահատման չափանիշը ձեզ համար պարզ է:
- Ձեզ հատկացված ժամանակը բավարար է գնահատմանը պատրաստվելու համար:
- Գնահատման կարգը նպատակահարմար է:
- Շարունակական գնահատումն արդյոք չափազանց շատ կամ չափազանց քիչ չէ:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ**

- Կարծում եք, որ դասընթացն ավարտելով ավելի կատարելազործվել եք:
- Կցանկանայի՞ք առաջադիմել հաջորդ մակարդակ:
- Կարո՞ղ եք գնահատել դասընթացի շնորհիվ ունեցած ձեր սեփական առաջընթացը:
- Արդյո՞ք դասընթացը ձեզ ավելի աշխատունակ է դարձրել:
- Կարո՞ղ եք տեղափոխվել մեկ մոդուլից հաջորդը:
- Ո՞րն է ձեր դասընթացի վերջնարդյունքը:

### **ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

- Ի՞նչ աջակցություն եք ստանում ձեր աշխատանքը կատարելու համար:
- Աջակցություն ստանում եք անձնակազմից:
- Ակադեմիական աջակցությունը հասանելի է:
- Գոյություն ունի արդյոք վայր կամ մարդ, ում կարող եք դիմել:

- Անձնակազմի անդամները և ուսանողները տեղյակ են խնդիրների լուծման ուղիներին:
- Ձեր խորհրդատուն օգտակար էր:
- Ինչպե՞ս եք գնահատում կարիերայի կենտրոնի աշխատանքը:
- Ստանում եք կարիերային վերաբերող խորհուրդներ:

### **ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

- Ինչպե՞ս եք գնահատում ձեր ուսումնական հաստատությունը այլ հաստատությունների համեմատությամբ:
- Ձեր դասախոսներից քանիսի՞ն կարող եք լավ գնահատական տալ:
- Կարծում եք, որ ձեր ֆակուլտետը արձագանքում է խնդիրներին:
- Ձեր կարծիքները լսելի՞ են և հաշվի՞ են առնվում:
- Ի՞նչ բարեփոխումների է ենթարկվել ձեր դասընթացը:
- Կարծում եք, որ ձեր դասընթացը ընդունելի չափանիշ է:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՐՁ**

#### **ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Տվյալ վարժությունը նախատեսված է ուսանողների խմբի կամ ուսանողական ներկայացուցիչների համար՝ օգնելու հասկանալ ուսուցման փորձի որակը:

Ձեզ անհրաժեշտ է՝

- շրջապաստառ (flipchart),
- նշիչներ շրջապաստառի համար,

- կաշուն նշաթերթիկներ,
- ուսանողական ուսուցման փորձի յուրաքանչյուր տարր՝ տպված առանձին քարտի վրա,
- ուսումնատության փորձի յուրաքանչյուր տարրին առնչվող հարցերով ամփոփագրեր (handouts):

Առանձնացրեք ուսանողների զույգեր կամ փոքր խմբեր:

Հարցրեք ուսանողներին, թե ինչն են ամենաշատը հավանում իրենց դասընթացում և ինչը կցանկանային փոխել: Ապա խնդրեք, որ գրի առնեն պատասխաններն ու արդյունքները: Սենյակում բաժանեք ուսանողների ուսուցման փորձի քարտերը, ինչպես նաև ուսանողական ուսուցման փորձի յուրաքանչյուր տարրին առնչվող հարցերով ամփոփագրերը: Թող պատասխանեն յուրաքանչյուր տարրին առնչվող հարցերին և փակցնեն համապատասխան քարտին: Այնուհետև քննարկեք նրանց հուզող հարցերը և կնկատեք բավականին մեծ տարբերություն նրանց նախկին պատասխանների համեմատությամբ: Նշեք նաև, որ նրանք իրական «փորձագետներ» են այս ոլորտում և իրենց կարծիքներով, լինի դրական, թե բացասական, օգնում են կերտել և ձևավորել ուսանողական ուսուցման փորձն իրենց և ապագա սերունդների համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսանողական ներկայացուցիչները պետք է ուշադրություն դարձնեն իրենց կրթության և ուսուցման փորձի որակի փոփոխությունների իրականացման վրա:

### 3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

#### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցությունը ակնկալում է միմյանց հետ աշխատող երկու կամ ավելի մարմինների հավասար փոխհարաբերություններ՝ ուղղված համընդհանուր նպատակի իրագործմանը և հարգելով յուրաքանչյուր կողմի ներդրած գիտելիքները, տարբեր կարծիքները, փորձը, ընդունակություններն ու հմտությունները: Այդ կազմակերպությունները ընդունում են համատեղ որոշումներ, և այդ որոշումների արդյունքներն իրագործելիս համագործակցում տարբեր աստիճաններում: Բարձրագույն կրթության դեպքում հաստատության ու դրա ուսանողների միջև առկա են արդյունավետ աշխատանքային հարաբերություններ, քանի որ անհատներն ու կոլեգիալ ներկայացուցչական մարմինները աշխատում են հնարավոր ամենաորակյալ կրթության ապահովման համար:

#### ԻՆՉ ԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ

#### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՍԵԼՈՎ

Համագործակցությունն ավելին է, քան սոսկ ուսանողների խորհրդատվությունը, ներգրավվածությունը կամ ներկայացուցչությունը որոշումների կայացման գործընթացում: Ուսանողները կոչված են աջակցելու գործընկերության զարգացման ուղիների որոնմանը:

Առաջին հերթին, ճիշտ համագործակցությունը ոչ թե միակողմանիություն է, այլ երկու կողմերի ակտիվ մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին: Յուրաքանչյուր կողմ պետք է գիտակցի, թե ինչ ներդրում ունի մյուս կողմը և զնահատի կատարված աշխատանքը:


Այս առումով համագործակցությունը կարող է դիտվել որպես հակադրություն գործարքային կամ սպառողական փոխհարաբերություններին: Ուսանողները ակտիվորեն մասնակցում են իրենց ուսումը կերտելու գործընթացին. ուսման մակարդակի բարձրա-

ցում ֆակուլտետային, համալսարանական, ազգային մակարդակներում, այլ ոչ թե ուսուցման ընդունում պասսիվորեն:

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՈՒՂՔ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Շերի Արնաթեինը դիտարկում է մասնակցության 8 աստիճան (դիագրամը ստորև), որը 1-ին աստիճանից (մանիպուլյացիա) աճում է դեպի ութերորդ աստիճան (քաղաքացիական հսկողություն): Համագործակցությունը քաղաքացիական ուժի տեսակ է, որը 7-րդ մակարդակում է:

Քաղաքացիական մասնակցության սանդուղք, Շերի Արնաթեին (1969)



Բաժանեք ուսանողներին 4-5 հոգանոց խմբերի և ցույց տվեք Արնաթեինի քաղաքացիական մասնակցության սանդուղքը: Հարցրեք նրանց կարծիքը, թե որ աստիճանակարգում է գտնվում ուսանողների ներգրավվածությունն իրենց համալսարանում: Հարկավոր է, որ նրանք հնարավորինս ազնիվ ու իրատեսական լինեն:

Այժմ հանձնարարեք խմբերին մտածել, թե ինչ է անհրաժեշտ փոխհարաբերությունները մեկ քայլ վեր բարձրացնելու համար, քանի որ միայն նման դեպքում կարող ենք հասնել իրագործելի նպատակների: Հակառակ դեպքում փոփոխությունները կարող են հասանելի, կայուն ու երկարաժամկետ չլինել:

Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կետերը.

- Ինչպիսի աջակցության կարիք կա:
- Ինչ միջոցներ պետք է տրամադրվեն:
- Ով ունի ներգրավվածության կարիք:

## **Ինչո՞ւ պետք է ուսանողները գործընկերներ լինեն**

Կրթությունը մեր հասարակության գլխավոր տարրն է, որ կերտում է ժողովրդավարության այունը: Ներկայացուցչական մարմիններում ներգրավվելով՝ ուսանողները դառնում են առավել ակտիվ քաղաքացիներ, ինչպես նաև մասնակցում ժողովրդավարության կերտմանը: Բացի այդ, ըստ ժողովրդավարության հիմնական սկզբունքի, մարդիկ պետք է կարողանան իշխանությանն ասել այն, ինչն անհանգստացնում է իրենց: Այսպիսով, ուսանողները, որպես տվյալ ոլորտի ազդեցության կրողներ, պետք է ակտիվ մասնակցության իրավունք ունենան կրթության համակարգում որոշումների կայացմանը:

Ուսանողների համագործակցությունը դրական ազդեցություն ունի յուրաքանչյուրիս համար: Գործնական մակարդակում ուսանողներն իրենց սեփական ուսման փորձագետներն են: Աշխատակազմի անդամները նույնպես փորձագետներ են մանկավարժական սկզբունքների, առարկայի վերաբերյալ գիտելիքների

ու համալսարանի աշխատանքի գործում: Հետևաբար, երբ աշխատակազմը և ուսանողներն աշխատում են համագործակցելով, ստեղծում են կրթության որակը բարելավող առավել արդյունավետ ուսումնական ծրագիր այն դեպքում, երբ բարելավված ու կատարելագործված կրթությունը բխում է բոլորի շահերից:

### **ԲԱՆԱՎԵՃ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ**

Տվյալ վարժությունը, որ կիրառվում է բանավեճի տեխնիկայում, օգնում է բարելավել քննադատական մտածողությունը ուսանողների՝ որպես գործընկերների շրջանում և քննարկել, թե ինչպես կարելի է հարթել վեճերը:

Տևողությունը՝ նվազագույնը 1 ժամ 20 րոպե, նախընտրելի է ավելի երկար:

Մասնակիցները՝ նվազագույնը 8 մասնակից, ոչ ավել, քան 16-ը:

1. Բաժանել խումբը նվազագույնը չորս մասնակից ներառող երկու խմբերի: Խմբերին առանձնացնել տարբեր սենյակներում այնպես, որ միմյանց լսելու հնարավորություն չլինի: Մի խումբը պետք է բանավեճի առաջարկին կողմ (այսինքն՝ ուսանողները գործընկերներ են), իսկ մյուս խումբը՝ առաջարկին դեմ (ուսանողները հաճախորդներ են):
2. Բացատրել բանավեճի ձևաչափը: Յուրաքանչյուր կողմից անհրաժեշտ է ընտրել 4 մասնակից և յուրաքանչյուր մասնակցի տրամադրել 2 րոպե խոսելաժամանակ: Խումբն է որոշում, թե ինչպիսին պետք է լինի յուրաքանչյուրի խոսքը, սակայն վերջին մասնակիցն, ըստ էության, պետք է փորձի ամփոփել բանավեճը: Անհրաժեշտ է բացատրել, որ վարժության նպատակը բանավեճի բովանդակությունն է, այլ ոչ թե ձևաչափը:
3. Անհրաժեշտ է խմբերին հատկացնել խոսքը նախապատրաստելու ժամանակ, տալ նրանց համապատասխան կա-



նուցվածք և բացատրել, թե ինչի մասին են խոսելու: Նրանց պետք է տրամադրել պատրաստվելու հնարավորինս երկար ժամանակ՝ առնվազն 30 րոպե: Տվյալ ժամանակահատվածում հարկ է ստուգել նրանց մասնակցությամբ քննարկումը, ընդգծել պատրաստած ենթադրությունները և ուղղորդել:

4. Բանավեճի համար խմբերին պետք է համախմբել մեկ սենյակում այնպես, որ ելույթ ունեցողները դեմ դիմաց լինեն, և տվյալ խմբի յուրաքանչյուր լրացուցիչ մասնակից լինի նրանց ետևում: Յուրաքանչյուրը պետք է ելույթ ունենա իր հերթին՝ կողմ և դեմ տեսակետների հաջորդականությամբ: Այս ամենը պետք է տևի առավելագույնը 20 րոպե:
5. Մնացյալ ժամանակահատվածում (սվազագույնը 20 րոպե) առաջնորդել քննարկումը այն խմբի հետ, որի խոսքն առավել համոզիչ էր:

Քննարկումը պետք է ներառի հետևյալ կետերը.

**ա/Ուսանողները գործընկերներ են, թե՛ հաճախորդներ:**

Նրանք պետք է լինեն գործընկերներ, ինչն ավելի ժողովրդավարական է: Ուսանողները փորձագետներ են իրենց ուսման հարցում, նրանք աշխատում են անձնակազմի հետ միասին, ինչն ապահովում է ավելի լավ ուսման փորձ յուրաքանչյուրի համար:

**բ/Արդյո՞ք գործընկերներն ավելի ազդեցիկ են, քան հաճախորդները:**

Այո, հաճախորդները կարող են պարզապես թողնել-հեռանալ՝ չգնելով վերջնական արդյունքը, ինչը կիրառելի չէ կրթական համակարգի պարագայում:

**գ/Ի՞նչ նպատակ էր հետապնդում բանավեճը:**

Հաճախ համալսարաններում ուսանողներն ու աշխատակազմի անդամները բանավիճում են, թե արդյո՞ք ուսանող-

ները հաճախորդներ են: Մեր գերնպատակն է պարզաբանել տվյալ շփոթությունն ու ուսանողների դերի ըմբռնումը համալսարանում:

## **ԻՆՉ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Այս վարժությունն օգնում է պարզել, թե ինչ ենք հասկանում համագործակցություն ասելով: Վարժության ընթացքում կրացահայտենք, թե ինչպիսի համագործակցություն է առկա ձեր ուսումնական հաստատությունում, և կա արդյոք այն փոփոխելու անհրաժեշտություն: Վարժությանը կարող են մասնակցել բոլոր ուսանողներն ու աշխատակազմի անդամները, ովքեր ներգրավված են ուսուցման ու դասավանդման գործընթացներում: Վարժությունը կարող է իրականացվել միայնակ կամ խմբակային տարբերակով: Այն առաջարկում է տարբեր նմանություններ ու համեմատություններ՝ համագործակցության մոդելներ, որոնցով ուսանողները հնարավորություն ունեն հաղորդակցվելու իրենց ուսումնական հաստատության հետ: Հնարավոր է մի քանի մոդել օգտագործել միաժամանակ, մինչդեռ կան մոդելներ, որոնք կիրառվում են ոչ բոլոր համալսարաններում: Յուրաքանչյուր մոդել ներառում է հարցերի շարք, որը մասնակիցները պետք է քննարկեն, ապա ներկայացնեն իրենց կարծիքները:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ**

Տվյալ դեպքում ուսանողների համագործակցությունն իրենց ուսումնական հաստատության հետ նմանվում է հաճախորդների ու առևտրային կազմակերպությունների հարաբերություններին: Նույնիսկ եթե ուսանողները չեն վճարում իրենց ուսման համար, այլ կառավարությունն է դասընթացի վաուչերներ տրամադրում: Համալսարանները փորձում են ավելի լավ պայմաններ ստեղծել ուսանողների համար իրենց եկամուտն ու դիմորդների հոսքը մեծացնելու նպատակով: Այս եղանակով համալսարանները գործում են ուսանողների հետաքրքրություններին համապատասխան:

Որքան շատ են վճարում ուսանողները, այնքան ավելի բարձր չափանիշներ են պահանջում իրենց ուսումնական հաստատությունից:

- Արտացոլվում է արդյոք այս երևույթը ձեր համալսարանում:
- Ի՞նչ հետևանքներ կարող են առաջանալ ուսանողների նման մոտեցման դեպքում:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՄ ՄԱՐԶԱՍՐԱՀԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Ուսանողների փոխհարաբերությունները համալսարանի հետ նման են մարգասրահ հաճախող մարդկանց: Ինչպես հնարավոր չէ ֆիզիկական լավ կարգավիճակ գնել, այնպես էլ հնարավոր չէ գնել կրթություն: Փոխարենը, ճիշտ այնպես, ինչպես մարգասրահի անդամն է ջանք գործադրում արդյունքի հասնելու համար, այդպես էլ ուսանողը պետք է քրտնաջան աշխատի հաջողության ձգտելիս: Ուսանողները «դատարկ անոթներ» չեն՝ լցված դասախոսների տված գիտելիքներով, այլ իրենց ուսման գործընթացի ակտիվ մասնակիցներ: Այս կերպ ուսանողներն իրենց ուսումնական հաստատության գործընկերներն են:

- Որքանով է այս մոդելը ճշգրիտ նկարագրում ուսանողների և ձեր ուսումնական հաստատության փոխազդեցությունը:
- Որքանով են ուսանողական միություններն ու որակի գործընթացները համապատասխանում այս մոդելին:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՄ ԼՈՐԲԻՍՏՆԵՐ**

Համալսարանում որոշումների կայացումն իրականացվում է բարձրագույն ղեկավարության կողմից: Ուսանողներն ու հատկապես ուսանողական միությունները կարող են որոշ փոփոխություններ իրականացնել իրենց հաստատությունում միայն համոզելով կառավարիչներին, որ այդ փոփոխությունը հեռանկարային է ու անհրաժեշտ: Նույնիսկ եթե բոլոր ուսանողները կողմ են այդ որոշմանը, այն չի իրականանա առանց հավաստելու բարձրագույն ղեկավարությանը, որ տվյալ մոտեցումը ճիշտ որոշում է:

- Նու՛յնն են արդյոք լոբբիստական «փոխհարաբերություն» և «համագործակցություն» հասկացությունները: Եթե ոչ, ապա ո՞րն է դրանց տարբերությունը:
- Ինչպե՞ս են ուսանողներն իրականացնում ներհամալսարանական փոփոխությունները: Արդյո՞ք նրանք լոբբիստներ են:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՇԱՀԱԿԻՑՆԵՐ**

Ուսանողները քննարկում են այն որոշումները, որոնք համալսարանը պատրաստվում է իրականացնել: Նրանց կարծիքները պետք է հաշվի առնել, քանի դեռ դրանք ազդեցություն ունեն ուսանողների վրա: Համալսարանները վստահեցնում են, որ ուսանողների տեսակետները ընդունվում ու լրջորեն հաշվի են առնվում:

- Տվյալ դեպքում ո՞վ է որոշում, թե որ ուսանողների հետ է անհրաժեշտ խորհրդակցել:
- Ո՞վ է ձևավորում ուսումնական հաստատության օրակարգը:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե ուսանողները և բարձրագույն դեկավարությունը համաձայնության չգան:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈԼՖԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Գոլֆի ակումբի անդամները կարող են օգտվել անհրաժեշտ հարմարություններից՝ միևնույն ժամանակ համաձայնելով որոշակի կանոնակարգի: Հաճախ նրանք նույնպես կարող են քվեարկել ու որոշել, թե քանի նոր անդամ կարող է ընդունվել տվյալ տարում, որ ժամերին է կարելի բացել ակումբը և նման այլ գործնական հարցեր: Ուսանողները գործում են նույն կերպ: Նրանք համաձայնում են լինել ուսումնական խմբի մի մասը, հետևել կանոնակարգին և ձեռք են բերում ուսումնական հաստատությունում իրենց շահերից բխող հարցերը ներկայացնելու իրավունք:

- Արտացոլվում է արդյոք այս մոդելը ձեր ուսումնական հաստատությունում:
- Ի՞նչ դեր են խաղում անձնակազմի անդամները այս մոդելում:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱԺՆԵՏԵՐԵՐ**

Բաժնետերերը, ընկերության բաժնետոմսերը գնելով, իրավունք են ձեռք բերում մասնակցել բաժնետերերի ամենամյա ընդհանուր ժողովին, որտեղ նրանք քննարկում են ընկերության գործունեության հետագա քայլերը և ընտրում տնօրենների խորհուրդ հաջորդ տարվա համար: Այս եղանակով նրանք «վերահսկում» են ընկերությունը: Նույն կերպ ուսանողները կարող են հաղորդակցվել ուսումնական հաստատության հետ, ընտրել, թե ով է ղեկավարում այն և սկզբունքներ առաջադրել կառավարման համար:

- Ի՞նչ առավելություններ ու թերություններ ունի ուսումնական հաստատության ղեկավարման այս սկզբունքը:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ**

Այս մոդելում ուսանողները դիտվում են որպես իրենց կրթության համահեղինակներ: Համատեղ նախաձեռնությամբ առաջնորդվող ընկերությունը գործում է ժողովրդավարական սկզբունքներով՝ աշխատակիցների կողմից: Ընկերության գործունեության գործնական որոշումներն ընդունվում են ժողովրդավարական եղանակով՝ աշխատակիցների միջև կիսելով ընկերության ստացած շահույթը: Որոշումների ընդունումը բարձրագույն ուսումնական հաստատություններում նույնպես պետք է իրականացվի ուսանողների ու անձնակազմի աշխատակիցների համատեղ գործունեությամբ՝ ժողովրդավարական և իշխանության ապակենտրոնացման եղանակով:

- Ինչպե՞ս կկանխեք հաստատությունական անվճռականությունը այս համակարգում:
- Արդյո՞ք անհրաժեշտ է, որ հաստատությունները լինեն ժողովրդավարական: Ինչո՞ւ:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ ՈՒ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐ**

Երբ ուսանողները կամ ուսանողական միությունները բացահայտում են որևէ թերություն կամ կարիք իրենց համալսարանում, նրանք իրենք են ձեռնամուխ լինում շտկելու, օրինակ այնպիսի հարցեր, ինչպիսիք են ակադեմիական ուսանողական կազմակերպությունների կամ սպորտային ակումբների ստեղծումը, ուսման պարզևավճարների տրամադրումը: Այս կերպ նրանք փորձում են լուծել առաջացած խնդիրները՝ առանց համալսարանի աջակցության:

- Կարո՞ղ եք մտաբերել այս մոդելի որոշ օրինակներ, որոնք առկա են ձեր ուսումնական հաստատությունում:
- Արդյո՞ք սա համագործակցություն է: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:
- Ինչպե՞ս կարող է այս մոդելը արտոնություն տալ ուսանողներին:

## **ԵԶՐԱՓՈՒԿ Զ ՀԱՐՑԵՐ**

Ձեր կարծիքը համալսարանում որակի գործընթացի վերաբերյալ, օրինակ, աշխատակազմ-ուսանող կապի ապահովման հանձնաժողովների կամ ուսանողական հարցումների առնչությամբ: Վերոնշյալ մոդելներից ո՞րն է ավելի լավ ներկայացնում աշխատակազմի և ուսանողների առկա փոխհարաբերությունները:

1. Տվյալ մոդելներից ո՞րն է առավել ճշգրտորեն արտացոլում ձեր ուսումնական հաստատությունում առկա իրավիճակը:

2. Ո՞ր մոդելը կամ մոդելների համախումբն է ավելի նախընտրելի ձեզ համար և ինչո՞ւ:
3. Եթե վերջին երկու պատասխանները տարբեր են, ապա ի՞նչ կփոխելիք ձեր ուսումնական հաստատությունում, որ գործեր ձեր նախընտրած մոդելը:
4. Երբ ձեր համալսարանում օգտագործվում է «համագործակցություն» եզրը, ի՞նչ եք կարծում՝ նշվածներից ո՞ր մոդելն է առավել համապատասխանում պատկերացումներին: Ինչպե՞ս կարող եք հավաստել, որ ձեր նախընտրած մոդելը ավելի արդյունավետ է:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Լավագույն կրթական փորձ ապահովելու համար անհրաժեշտ է ուսանողների ակտիվ ներգրավվածություն ուսումնական հաստատությունում կրթության վերաբերյալ քաղաքականության բարելավման, որոշումների ընդունման և ծրագրերի իրականացման գործընթացներում: Համագործակցության մոդելը ենթադրում է, որ փոխհարաբերության բոլոր կողմերը հավասարազոր գործընկերներ են: Ուսանողները և ուսումնական հաստատության անձնակազմի անդամները գործելով միասին կարող են բարելավել կրթական փորձը:

## 4. ՈՐԱԿԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարիներ շարունակ քննարկվել և տարբեր գնահատականներ են տրվել համալսարանների տրամադրած կրթության որակին՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ ոչ այնքան: Միաժամանակ, վերջին տարիներին փորձեր են կատարվում բարելավել բարձրագույն կրթության որակի գնահատման մոտեցումները հաստատությունական ու ազգային մակարդակներում:

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ` ESG

Կրթության որակի վերանայման եվրոպական մոտեցումն էական զարգացում ապրեց, երբ հրատարակվեց բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովմանն ուղղված «Եվրոպական չափանիշներ և ուղղորդման կանոններ» աշխատությունը: ESG-ն խթանում է ուսումնական հաստատություններին կարևորելու որակն ու որակի ապահովումը իրենց աշխատանքային գործընթացում, ինչպես նաև տրամադրում աջակցություն այն մոտեցումներին, որոնք հնարավոր են դարձնում այդ գործընթացը: ESG-ը կրթական պատշաճ որակ սահմանելու փոխարեն բացահայտում է այն գործընթացներն ու սկզբունքները, որոնց միջոցով ապահովվում ու բարելավվում է որակը: ESG-ը նշում է, որ ստուգումները պետք է լինեն թե՛ ներքին, թե՛ արտաքին: Ներքին և արտաքին վերանայումների գործընթացները կարող են սահմանվել ազգային չափանիշների համաձայն, սակայն ուսումնական հաստատությունները կարող են ունենալ նաև ներքին ընթացակարգեր: ESG-ն կազմող մոտեցումներն են.

- հաստատությունական որակի գործընթաց,
- արտաքին վերանայում,
- կառավարում, ուղղորդում և որակի ազգային ծառայությունների մեթոդներ:



## ԻՆՉՈՒՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Վերանայումները կարևոր են մի շարք պատճառներով.

- Երաշխավորում են հովանավորներին, այդ թվում՝ կառավարությանը, որ հանրային միջոցները խելամիտ են օգտագործվում:
- Անհրաժեշտ տեղեկատվություն են տրամադրում ուսանողներին, դիմորդներին, գործատուներին և ընդհանրապես հասարակությանը ուսումնական հաստատություններում առկա փորձի որակի ու չափանիշների վերաբերյալ:
- Հնարավորություն են ընձեռում ուսանողներին ու անձնակազմի անդամներին արտացոլելու ընթացիկ փորձը, ճշգրտումներ կատարելու և բարելավելու այն:

## ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Ներքին վերանայումը հնարավորություն է ընձեռում համալսարաններին տեղյակ լինել ու շտկել ծագող խնդիրները՝ մինչ դրանց անկառավարելի դառնալը: Ներքին վերանայման որոշ գործընթացներ սահմանվում են ազգային մակարդակում պայմանավորվածության համաձայն, սակայն համալսարանը ևս կարող է վերանայումներ ձեռնարկել: Համալսարանը պետք է ներքին ընթացակարգեր մշակի ծրագրերի հաստատման, մշտադիտարկման ու պարբերական վերանայումների համար՝ կարևորելով ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացին:

## ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Համալսարանները պետք է զարգացնեն նաև արտաքին վերանայումների համակարգը, որը սովորաբար կառավարվում է որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից: Որակի ազգային կենտրոնը պետք է ուշադրություն դարձնի գնահատման համակարգի, դասախոսական կազմի, ուսուցման ռեսուրսների, ուսանողների աջակցության, տեղեկատվական կառավարման և հանրային տեղեկատվության գործընթացներին և այլն:

## ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Գոյություն ունեն վերանայումների երկու մոտեցումներ՝ տեսչական, երբ ուղղակի դիտարկվում է դասավանդման գործընթացը, և հաշվապահական, երբ ուսումնասիրվում են հաստատութենական գործընթացները: Վերանայումները կարող են իրականացվել ինչպես որևէ առարկայի շրջանակներում, օրինակ՝ վերանայվում են երկրի կամ հաստատութենական մակարդակում բոլոր տեխնիկական դրույթները, այնպես էլ հետաքրքրությունների որոշակի ոլորտում, օրինակ՝ առաջին տարվա փորձը կամ ուսանողների աջակցության ծառայությունները:

## ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Վերանայումը պետք է.

- ունենա հստակ նպատակներ,
- ունենա համաձայնեցված ժամանակացույց ստուգումների հաճախականության համար,
- ընձեռի ազգային մակարդակում իրականացվող վերանայումներից սովորելու հնարավորություն,
- ունենա գործընթաց, որը թույլ կտա հաստատությանը ինքնավերլուծություն իրականացնել,
- ներառի փորձագիտական գնահատականներ,
- աջակցի բարելավմանը:

Թեև ներքին վերանայումները կարող են սահմանվել ազգային մակարդակում, սակայն վերանայման բուն գործընթացը հաճախ իրականացնում է համալսարանը, քանի դեռ ապահովում է վերոնշյալ չափանիշները:

Արտաքին վերանայումների դեպքում ESG-ը նշում է, որ գործընթացները, չափանիշները և ընթացակարգերը օգտագործվում են որակավորման ազգային կենտրոնների կողմից և պետք է լինեն նախապես սահմանված ու հասարակությանը հասանելի: Այս գործընթացները սովորաբար ներառում են արտաքին

գնահատում մի խումբ փորձագետների կողմից անհրաժեշտության դեպքում խմբերում ներառվում են նաև ուսանողներ: Գործընթացները պետք է համապատասխանեն առաջադրված նպատակներին և ներառեն անհրաժեշտ դասընթացի անցկացում ու նախապատրաստում փորձագետների համար՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը:

Սովորաբար արտաքին ստուգման դեպքում ուսումնական հաստատությունը նախապատրաստում է **արտացոլող փաստաթուղթ**, որտեղ նշվում են որակի ընթացակարգերի ու դրույթների վերաբերյալ փաստեր՝ արտացոլելով հուզող հարցերի շրջանակը: Այս փաստաթուղթը համալսարանի կողմից ներկայացվում է որակի ապահովման ազգային կենտրոն: Այս իրականացվում է որակի վերանայման այցելություն փորձագիտական խմբի կողմից, որը սովորաբար կազմված է այլ համալսարանների դասախոսներից, գործատուներից, միջազգային փորձագետներից և ուսանողներից՝ արտացոլող փաստաթղթի համաձայն իրականացնելու ուսումնական հաստատության ուսումնասիրությունը: Կարող են սահմանված լինել նրանց գործունեության որոշակի դրույթներ, օրինակ՝ որքան ժամանակ է անհրաժեշտ խոսելու ուսանողների որոշակի խմբի հետ: Փորձագիտական խմբի գործունեությունը ներառում է մի շարք հանդիպումներ ուսանողների և ուսումնական հաստատության անձնակազմի տարբեր խմբերի հետ և կարող է ներառել նաև ապահովվածության ուղղակի ուսումնասիրություն, օրինակ՝ լսարանների ուսումնասիրություն: Խումբն ուսումնական հաստատությունում կարող է անցկացնել մեկ շաբաթ կամ այցելել մի քանի անգամ: Որակավորման ազգային կենտրոնի անձնակազմի դերը կարող է տարբեր լինել: Սովորաբար նրանք առաջարկում են իրենց աջակցությունը փորձագիտական խմբին ստուգման գործընթացում, սակայն չլինելով դրա անդամ, չեն մասնակցում խմբի կայացրած որոշումներին:

Վերանայման արդյունքը լինում է վճռի տեսքով, որը կարող է ներառել գնահատման որոշակի սանդղակ, օրինակ՝ գերա-

զանց, բավարար, վատ կամ այլ նկարագրական մեկնաբանություն, նաև խորհուրդներ գործողությունների վերաբերյալ: Մեկնաբանությունները կարող են լինեն հակիրճ և նախատեսված բազմամարդ լսարանի, այդ թվում՝ հասարակության համար, և/կամ ծավալուն՝ ուղղված ուսումնական հաստատության մասնագետներին: Որոշումների մի մասը ու հաստատությանը տրվող պահանջները պետք է ներկայացվեն և հասանելի լինեն հասարակությանը:

Որակի ապահովման ազգային կենտրոնը, որպես կանոն, պետք է պատասխանատվություն կրի որակավորման արդյունքների հրապարակման համար կառավարության ու ազգային մակարդակում: Սովորաբար ուսումնական հաստատությունն, ի պատասխան վճռի, կարող է պահանջել խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ծրագիր: Այն դեպքում, երբ վերանայման արդյունքները գոհացուցիչ չեն, հետևանքները կարող են լուրջ լինել, օրինակ՝ կարող է կրճատվել ֆինանսավորումը կամ դասընթացի անցկացումը հայտարարվել չեղյալ:

### **ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՅԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA) առաջարկում է հաստատութենական գնահատման ծրագիր (IEP) եվրոպական մակարդակում վերանայումներ իրականացնելու համար, որոնք հետևում են միևնույն սկզբունքներին, ինչ ESG-ի դեպքում: Ի լրումն, Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) վերանայում է որակի ազգային ապահովման կենտրոնների գործողությունները ESG-ին համապատասխան: Որակի ապահովման կենտրոնները, որոնք իրենց արտաքին գնահատումներում պահպանել են ESG կանոնները, կարող են ներգրավվել բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական կազմակերպության կազմում (EQAR): Այդ կազմում ներգրավված որակի ապահովման կենտրոնները հաստատության պահանջի դեպքում կարող են նախաձեռնել վերանայումներ այլ երկրներում, ինչը կարող է կարևոր-

վել հաստատության համար, օրինակ՝ այլ երկրի մի շարք մրցակիցների համեմատ որակի գնահատման դեպքում:

Ուսումնական հաստատությունները կարող են նաև ենթարկվել մասնագիտական մարմինների իրականացրած վերանայումներին: Օրինակ, եթե համալսարանը առաջարկում է հաշվապահական դասընթաց, որը ենթադրում է որոշակի շեղումներ մասնագիտական քննություններից, ապա այն պետք է ենթարկվի տվյալ որակավորումը շնորհող հաշվապահական մասնագիտական մարմինների վերանայումներին:

### **ՈՒՍԱՆՈՂ ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻՆ**

Վերջին տարիներին շատ է կարևորվում ուսանողների ներգրավվածությունը վերանայումների գործընթացին: Տվյալ համատեքստում առանձնացվում են հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է պետք ընտրել և սովորեցնել ուսանող փորձագետներին:
- Արդյո՞ք ուսանող փորձագետները պետք է վարձատրվեն:
- Ինչպիսի՞ն պետք է լինի ուսանողների դերը: Արդյո՞ք նրանք փորձագիտական խմբի լիիրավ անդամ են, թե ունեն «ուսանողական» հատուկ պարտականություններ:
- Ինչպիսի՞ք են ուսանող փորձագետներից ակնկալվող վերջնարդյունքները, օրինակ՝ նրանք պետք է ներկայացնեն ամբողջական հաշվետվություն /առանձին զեկույց/, ստորագրեն փորձագիտական խմբի մնացած անդամների զեկույցները:
- Պետք է հստակեցնել ուսանողների ազգային ասոցիացիայի ու որակի ապահովման կենտրոնի դերերը, օրինակ՝ ո՞վ պետք է հավաքագրի և սովորեցնի ուսանող փորձագետներին:

## ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՐՁ

Վերանայումները ուսումնական հաստատությունում ուսանողական փորձի վրա ազդելու կարևոր միջոց են:

- Ուսումնական հաստատություններն ունեն ներքին և արտաքին վերանայումների համար նախատեսված հատուկ գործընթացներ: Ներքին վերանայումների համար նախատեսվում է ժամանակացույց և մեկ ու ավելի իրականացված վերանայում յուրաքանչյուր ուսումնական տարում: Պարզեք, թե երբ է իրականացվել ձեր ուսումնական հաստատության արտաքին վերանայումը, և երբ կլինի հաջորդը: Դուք կարող եք պարզել, թե ինչ է առաջարկվել ձեր ուսումնական հաստատությանը վերջին վերանայման զեկույցում, և ինչպես են հաստատությունում պատրաստվում արձագանքել դրան: Նույնիսկ եթե հաջորդ վերանայումն իրականացվելու է ավելի քան մեկ տարի հետո, հաստատությունը կարող է արդեն իսկ սկսել անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և իրականացնել բարեփոխումներ՝ ի պատասխան նախորդ վերանայման:
- Պարզեք, թե ինչպես է արձագանքել ձեր ուսումնական հաստատությունը վերջին վերանայմանը և ինչպես է այն նախապատրաստվում հաջորդին: Գոյություն ունեն արդյոք ուսանողների տեսակետները բացահայտելու համար նախատեսված եղանակներ, որոնցում կարող եք ներգրավվել, օրինակ՝ առաջադրված ֆոկուսային խմբեր կամ բացիկների քարտզարշավ: Առկա են պլանավորման փոքր խմբեր, որոնք համակարգում են նախապատրաստումները: Եթե կան, ապա դրանցում պետք է ներառված լինի առնվազն մեկ ուսանող:
- Պարզեք, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ վերանայման համար: Արդյո՞ք ուսանողները նյութերը ներկայացնում են առանձին-առանձին: Ինչպե՞ս կարող եք

նպաստել հիմնական արտացոլող փաստաթղթի ձևավորմանը: Ձեր կարծիքով՝ նյութը, որ հաստատությունը պետք է ներկայացնի, ճշգրիտ է արտացոլում ուսանողների փորձը, և հնարավոր է տրամադրել նախադեպերի ուսումնասիրություն կամ այլ փաստեր: Եթե հնարավոր է, ապա մի թերագնահատեք այս գործընթացի ժամանակացույցը: Կարող է պահանջվել մեկ տարի պատշաճ գեկույց պատրաստելու համար:

- Փորձագիտական խմբի՝ հաստատություն այցելության նախապատրաստմանը ներգրավված լինելու դեպքում կարող եք հրավիրված լինել փորձագիտական խմբին ներկայացնելու ուսանողների տեսակետները: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ձեզ բավականաչափ ժամանակ է հարկավոր նախապատրաստվելու համար, քանի որ սա ուսանողների տեսակետներն ու ձայները լսելի դարձնելու միջոց է:
- Ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նախնական տվյալներ մինչ փորձագիտական խմբի արդյունքների հրապարակումը, տվյալ դեպքում համոզվեք, որ կարող եք մեկնաբանել դրանք:
- Հրապարակված նյութը կօգնի ձեզ ծանոթանալ օրակարգի փոփոխությանը: Եթե ձեզ մտահոգող խնդիրները նշված են գեկույցում, ապա ձեզ կընձեռնվի հաստատության հետ փոփոխությունների պլանավորման հարցով աշխատելու բացառիկ հնարավորություն: Անհրաժեշտ է նաև ապահովել մնացած ուսանողների տեղեկացվածությունը արդյունքներին և նրանց հետ աշխատել փոփոխության ենթակա ծրագրերը զարգացնելու ուղղությամբ:
- Անհրաժեշտ է վերանայել նախկին գեկույցն առնվազն մեկ տարի առաջ՝ նախքան հաջորդ ստուգման իրականացումը և պարզել, թե կան արդյոք կարևոր հարցեր և խնդիրներ, որոնց ուսումնական հաստատությունը չի

անդրադարձել: Դրանք ներկայացնելու և լուծման ուղիներ փնտրելու ժամանակն է: Ոչ-ոք չի ցանկանա, որ ուսանողները միևնույն հարցը երկու անգամ բարձրացնեն:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Գոյություն ունեն համալսարանի տրամադրած կրթության որակի վերանայման մի շարք փոխկապակցված մոտեցումներ, որոնք կազմում են վերանայումների ցանց՝ ապահովելով կրթության որակի համաձայնեցումը, այլ ոչ թե դրա խիստ սահմանումը: Այս ճկունությունը թույլ կտա համալսարաններին զարգացնել մեխանիզմներ, որոնք համապատասխանում են իրենց կարիքներին՝ միևնույն ժամանակ համապատասխանելով ազգային համաձայնեցված չափանիշներին:





ՄԱՍ III

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1. ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՃԱԽԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնարավոր է, որ որպես ուսանողության ներկայացուցիչ կամ տեսաբան, ստիպված լինեք հաճախել մի շարք հանդիպումների, ինչը պարտականությունների շատ կարևոր հատված է: Այս գործընթացն ավելի դյուրին դարձնելու համար պետք է զարգացնեք որոշակի հմտություններ, որպեսզի կարողանաք հնարավորինս արագ գործի անցնել և ի վիճակի լինել ավելի արդյունավետորեն ներդնելու ձեր ջանքերը:

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Հանդիպումից առաջ պետք է իրականացնել հետևյալ գործողությունները.

- ճշտել հանդիպման վայրը,
- խորհրդակցել ուսանողների հետ և ճշտել նրանց կարծիքը ուսումնական փորձի վերաբերյալ,
- զրուցել կրթական հաստատության ղեկավար անձնակազմի հետ. կան արդյոք հարցեր, որ կցանկանայիք ներառել օրակարգում,
- կարդալ բոլոր փաստաթղթերը, որ ձեզ կներկայացվեն,
- քննարկել լուծումներ գալիք հանդիպման մասնակիցների հետ,
- զրուցել այլ ուսանող ներկայացուցիչների կամ ուսանող տեսաբանների հետ:

Հանդիպման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

- ժամանակին ներկայանալ, իսկ եթե ուշանում եք, ապա մինչև հանդիպման սկսելը տեղեկացնել այդ մասին խորհրդի նախագահին,
- վերցնել թուղթ և գրիչ գրառումների համար,
- նստել այնպես, որ խորհրդի նախագահը լավ տեսնի ձեզ և որպես կարծիք հայտնելու կամ նոր միտք ավելացնելու նշան ձեռք բարձրացնել,
- հիշել արդյունավետ հետադարձ կապի A, B, C, D կանոնները, որոնց մասին կխոսվի հաղորդակցության հմտությունների մասում,
- տալ հարցեր, եթե ոչինչ չեք հասկանում,
- աջակցել այլ ուսանող ներկայացուցիչներին կամ տեսարաններին:

Հանդիպումից հետո պետք է կատարել հետևյալ գործողությունները.

- հաշվետու լինել ձեր ուսանողական ընկերներին,
- քննարկել հանդիպման ամեն բոլորը,
- պարտաճանաչորեն կատարել այն ամենը, ինչ հանդիպման ժամանակ խնդրել են կատարել,
- մտածել բոլոր անհանգստացնող մտքերի ու գաղափարների ուղղությամբ,
- հասկանալ՝ հասնել եք արդյոք այն ամենին, ինչին ուզում էիք հասնել. եթե ոչ, ապա հետագայում ի՞նչ քայլեր եք պատրաստվում կատարել այդ ուղղությամբ :

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եղևք նախապատրաստված:

## 2. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցությունը գործողությունների համաձայնեցված շարք է զարգացման նպատակով նախատեսված փոփոխության հասնելու համար: Համագործակցությունն, ինքնին, ենթադրում է փոփոխությունների կատարում: Ուսանողներն իրենց համալսարաններում կարող են ներգրավվել և դրական փոփոխություններ ապահովել որակի ու ուսումնական փորձի առնչությամբ: Այս հատվածը ներկայացնում է համագործակցությունը սկսելու գործողության ողջ բովանդակությունը:

### ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

Ուսանողները, որպես հաստատութենական հաշվեքննության և ստուգման ենթակա խմբերի անդամներ, գործընկերներ են իրենց համալսարանի հետ, հետևաբար այս կարգավիճակում նախաձեռնողականություն ցուցաբերելու հեղինակություն և պատասխանատվություն ունեն: Նրանք էական նշանակություն ունեն իրենց փորձը կրթության և ամբողջ հաստատության զարգացման մեջ ներդնելու համար:

Ուսանողները կարող են դերակատարություն ունենալ ուսումնական բոլոր մակարդակներում կատարվող փոփոխություններում՝ լսարանային դասախոսություններում իրականացվող փոփոխություններից մինչև համազգային մակարդակի քաղաքականության փոփոխությունների իրագործում: Անհատական մակարդակում նրանց կատարած փոփոխությունները, որոնք օգուտ են տալիս իրենց տեղական շրջանակին, կարող են անհրաժեշտ լինել նաև հավաքական ձայնի համար: Հավաքական ձայնն ավելի գորավոր է, քան անհատական ձայները: Հավաքական ձայնը հատկապես կարևոր է մեծ թվով ուսանողների փորձի մակարդակը փոխելու նպատակ դնելիս. այն ավելի ազդեցիկ է և արդյունավետ:

Հավաքական ձայնը հզոր է:

Այս մեծ փոփոխություններն իրագործելու համար հաճախ անհրաժեշտ է սկսել համագործակցել: Համագործակցությունը կարող է բարձրացնել որոշակի խնդրի վերաբերյալ տեղեկացվածությունը: Հաճախ սա համագործակցության անհրաժեշտ գործառույթն է, որ պետք է դիտվի որպես սկզբնակետ, այլ ոչ թե համագործակցության բուն նպատակ:

Համագործակցությունը պետք է լինի լավ կազմակերպված և հանուն հաջողության: Հաջորդ մասերում կներկայացվեն որոշ գործիքներ, որոնք դուք կարող եք օգտագործել լավ համագործակցությունը հասկանալու, ծրագրելու և սկսելու համար:

## ԻՆՉՊԵՍ ՄԿՍԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հաջողված լինելու համար համագործակցությունը պետք է լինի լավ ծրագրված և ընդգրկի մարդկանց և ռեսուրսների որոշակի շրջանակ:

Համագործակցությունը սկսելու և իրագործելու համար տրամաբանական հաջորդականությամբ առանձնացնում ենք հետևյալ կետերը:

Ճիշտ դասավորվածությունը հետևյալն է.

1. **Սկզբնակետը** պետք է լինի **բուն խնդրի ըմբռնումը**, որի համար կատարում ենք ուսումնական հաստատության ուսումնասիրություն, ուսանողների հարցազրույց, ստուգումներ կարգուկանոնի վերաբերյալ, դասընթացի արդյունավետության, դրա ապահոված ցուցանիշների վերանայում:
2. **Այդ խնդրի լուծման ուղիների որոշակիացում**, որի համար պետք է հարցազրույց անցկացնել ազգային ուսանողական մարմնի, ուսանողական ոլորտում գրասենյակային աշխատողների, համալսարանի անձնակազմի և ուսանողների հետ:

3. **Համագործակցող թիմի ստեղծում**, որի համար օգնության կհասնեն ՋԼՄ-ները, պաստառները, հանդիպումները և հրապարակային ելույթները:
4. **Համագործակցության բուն նպատակի սահմանում**, որը պետք է լինի կարճ, ամբողջական և հստակ, այսինքն՝ ուղղված լինի բուն նշանակետին, ինչին ուզում եք հասնել:
5. **Որոշումների կայացնողի հստակեցում**. որոշումներ կայացվում են միանձնյա՞մ, թե ավելի մեծ թվով մարդիկ են ընդգրկված այդ գործընթացում: Եթե ընդհանուր գնահատական տալու համար ուզում եք հետադարձ կապի նոր քաղաքականություն ունենալ, ապա ոչ թե սովորելու և սովորեցնելու համար պատասխանատու անձնակազմի անդամների, այլ այս հմտություններին զուգահեռ դասընթաց վարող առաջնորդների կարիք ունեք:
6. **Հստակեցում, թե ով կարող է ազդեցություն ունենալ որոշումներ կայացնողի կամ կայացնողների վրա**. ո՞ւմ կարող են հրավիրել և ընդգրկել հանձնաժողովի հանդիպումների ժամանակ, և կա՞մ արդյոք խումբ, որի հետ սերտորեն եք աշխատում:
7. **Ձեր օգնականների ներկայացում**, այսինքն՝ ծրագրի ընթացքում ձեզ աջակցելու պատրաստակամություն ունեցող անձանց առանձնացում պարզելու, թե արդյոք նրանք բավականաչափ ազդեցիկ են ուժեղ հովանավոր լինելու համար: Կարող եք հանդիպում կազմակերպել հանձնաժողովների անդամների հետ, և նրանց էլ ակնարկել, որ զբաղվեն այս հարցով:
8. **Բոլոր փաստարկների մեկտեղում՝** պարզելու, թե ինչ փաստեր և վկայություններ ունեք, և դրանցից որոնք կարող են ավելի համոզիչ լինել որոշում կայացնողի համար:
9. **Գործողությունների ծրագրում՝** պարզելու, թե ինչ ազդեցություն դրանք կունենան և ինչքանով են դրանք համա-



պատասխանում խնդրի բովանդակությանը: Գործողություններ ասելով նկատի ունենք, օրինակ, խնդրագրերը, հանձնաժողովի հանդիպումներին մասնակցությունը, դիվանագիտական ճարպիկ հնարքները, սոցիոլոգիական հարցումները և այլն:

10. **Ջրույց տեղական լրատվական միջոցների հետ**, որը պարտադիր և անհրաժեշտ պայման չէ, բայց կարելի է օգտագործել զուտ թափանցիկություն ապահովելու նպատակով:
11. **Շնորհակալություն գործընկերներին**. անհրաժեշտ է, որ նրանք իրենց գնահատված գգան:
12. **Հաղորդակցություն հաղթանակածների հետ**, այսինքն՝ թույլ տալ ուսանողական մարմնին տեղեկանալ, թե դուք ինչ եք արել:
13. **Ընդհանուր գնահատականի տրամադրում**, թե ինչն է աշխատել, ինչը՝ ոչ, հաջորդ անգամ ինչն այլ կերպ կանեիք:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Որպես ուսանող տեսաբան՝ հավանական է, որ ստուգումների ժամանակ կկրեք ուսանողների կարծիքները հավաքագրելու ողջ պատասխանատվությունը: Այս ուղեցույցը կներկայացնի ուսանողների կարծիքների հավաքագրման գործընթացը:

### **Առաջին քայլ. ինչ հարցեր են բարձրացվում**

Կարևոր է նշել որոշ պարզ հարցեր, որոնք ուսանողները բարձրացնում են հարցման ժամանակ: Հարցերը, որ նրանք կբարձրացնեն, կարող են գոյություն չունենալ վերանայման ենթակա փաստաթղթերում և նույնիսկ հակասել համալսարանի ղեկավար ու ուսուցանող անձնակազմի ներկայացրած իրականությանը: Այս-

պիսով, անհրաժեշտ է պարզել, թե որ հարցերն արժե կարևորել վերանայման ընթացքում:

### **Երկրորդ քայլ. համալսարանների ուսումնական փորձի որ տարրերի հետ է առնչվում տվյալ խնդիրը**

Ստուգումը ամբողջությամբ կենտրոնանում է ուսումնառության և դասավանդման մատուցման ու ուսումնական փորձի որակի վրա: Որոշ հարցեր կարող են ակնհայտորեն կապված լինել սովորելու և դասավանդելու հետ: Մնում է տեսնել, թե արդյոք կարող եք քննարկվող հարցը ընդգրկել ուսանողների ուսումնական փորձի կատեգորիաներից մեկում: Դուք կարող եք գործ ունենալ ուսանողների ուսումնական փորձի կամ այլ խումբ հարցերի հետ, որ կառնչվեն այլ մարդկանց՝ ուսանողական ընկերությունների, դեկավար անձնակազմի և բարեկեցության հետ:

### **Երրորդ քայլ. հատկապես ում վրա և ինչպես է ազդում տվյալ հարցը**

Քանի որ արդեն գիտեք բարձրացվող հարցերը և գիտեք, թե դրանք ինչքանով են կապված վերանայման հետ, օգտակար կլինի պարզել, թե ում վրա է ազդում տվյալ խնդիրը: Որոշ հարցեր կազդեն ամբողջ ֆակուլտետի կամ բաժնի վրա, որն էլ դարձնում է դրանք ավելի պարզաբանված, բայց կբացահայտեք նաև, որ որոշ հարցեր որոշակի ուսանողների վրա ավելի մեծ ազդեցություն ունեն, քան մյուսների:

### **Չորրորդ քայլ. այդ հարցի մասին վկայող ինչ փաստեր կան**

Ուսանողների բարձրացրած խնդիրները հնարավորինս պետք է ապահովված լինեն փաստերով: Դրանք կարող են լինել հատուկ օրինակներ կամ փաստացի տեղեկություններ, ինչպիսիք են նաև հանդիպման ժամանակ արված գրառումները: Կարող եք գտնել անհրաժեշտ փաստերը նաև վերանայման ենթակա փաստաթղթերում և հարցման նյութերում:

### **Հինգերորդ քայլ. եթե ավելի շատ փաստերի կարիք ունեք, ինչ մեթոդներ և ռեսուրսներ եք պատրաստվում կիրառել**

Արդյո՞ք ուսանողների կողմից տրված տեղեկություններից և վերանայման փաստաթղթերից դուրս գրած տվյալներից բացի ձեզ անհրաժեշտ են ավելի շատ տեղեկություններ: Պարտադիր չէ, որ ինքներդ փորձեք գտնել այդ տեղեկատվությունը, բայց վերանայման ընթացքում կարող եք հայտնել ձեր անհանգստության մասին և տեղեկություններ խնդրել գործի հետ առնչվող մարդկանցից:

### **Վեցերորդ քայլ. էլ ում է անհրաժեշտ ընդգրկել խնդրի քննարկման շրջանակներում**

Մտածե՛ք, թե ում հետ կարիք կունենաք խոսելու ավելի շատ տեղեկություններ ստանալու կամ հարցերն ուղղելու և բարձրացնելու համար:

### **Յոթերորդ քայլ. ինչպես եք պատրաստվում ներկայացնել այս բոլոր փաստերը**

Պետք է ստուգման հանձնաժողովին ներկայացնել, թե ինչ եք պարզել՝ այդ առնչությամբ հստակ ու հակիրճ դատողություններով: Պատրաստ եղե՛ք հանձնաժողովին ներկայացնելու, թե ինչ հարցեր են բարձրացվել ձեր առջև: Ողջ ընթացքում հարկավոր է մնալ անաչառ և անկողմնակալ, և այս առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար կարող եք հետևել արդյունավետ հետադարձ կապի A,B,C,D կանոններին: Կարող եք կիրառել նաև Խորհրդակցության ծրագրի օրինակը (Consultation plan template), որը կօգնի ձեզ ուսանողների հետ խորհրդակցություն անցկացնելիս:

Խորհրդակցության ծրագրի օրինակը ներառում է հետևյալ կետերը.

<b>Նպատակ. ինչ եք ուզում պարզել և ինչպե՞ս</b>	
<b>Նշել մարդկանց. ու՞մ հետ եք ուզում խորհրդակցել և ինչո՞ւ</b>	<b>Մեթոդներ և մոտեցումներ.</b> ինչ գործիքներ եք պատրաստվում օգտագործել և ինչպե՞ս
<b>Գործընկերներ.</b> ու՞մ եք պատրաստվում ընդգրկել կամ ապահովել տեղեկատվությամբ	
<b>Նախատեսված լսարան.</b> ո՞ւմ հետ եք կիսելու այս խորհրդակցության ձեռքբերումները, նրբ, որտե՞ղ և ինչ ձևով	
<b>Ժամկետներ.</b> ինչ է անհրաժեշտ անել և մինչև երբ	

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ համագործակցությունը հաճախ անհրաժեշտ է լայն ընդգրկում ունեցող և խորը փոփոխություններ սկսելու համար: Որպես ուսանողներ՝ դուք պետք է ունենաք ձեր ներդրումը և ազդեցությունն այլ ուսանողների ու նրանց ուսումնառությանը վերաբերող փոփոխությունների վրա: Դուք կլինեք ավելի ուժեղ համատեղ ջանքերով գործելու դեպքում:

Գիտակցե՛ք ուսանողների՝ փոփոխությունների վրա ազդելու և նախաձեռնող լինելու ներուժը:

### 3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ հաղորդակցման հմտությունների կարևորության գիտակցումը կօգնի ձեզ առավելագույնս օգտագործել ձեր հնարավորությունները որպես ուսանող տեսաբան:

Դուք կաշխատեք լսարանների հիմնական 3 խմբերի հետ.

1. ձեր խմբի անդամները,
2. վերանայման կազմակերպիչները,
3. հետազոտվող խմբի անդամները և մարդիկ, ում հետ կապ կհաստատեք վերանայման նախաձեռնության ընթացքում, ներառյալ ուսանողները:

Դուք կփոխազդեք տվյալ խմբերից յուրաքանչյուրի հետ տարբեր կերպ և տարբեր նպատակների համար: Ստիպված կլինեք հարմարեցնել ձեր հաղորդակցման ոճը՝ ըստ լսարանի և հարցի բովանդակության:

Հաղորդակցությունը սկսելուց առաջ անհրաժեշտ է մտածել, թե

1. ինչպիսին է շրջակա միջավայրը,
2. ի՞նչ հարցի շուրջն է պետք հաղորդակցվել,
3. ո՞ւմ հետ եք ուզում կապ հաստատել,
4. ո՞րն է ձեր ցանկացած տեղեկատվությունը տեղ հասցնելու ամենաարդյունավետ ձևը,
5. հաղորդակցման ժամանակի ընտրությունը:

## ԼՍԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ունկնդրելն ավելին է, քան պարզապես ինչ-որ բան լսելու գործառույթը: Ունկնդրելը գործընթաց է, երբ անհրաժեշտ է կենտրոնանալ տեղեկատվության վրա հասկանալու, վերլուծելու, գնահատելու նպատակով՝ մինչև, անհրաժեշտության դեպքում, դրան հարմար պատասխան որոշելը: Երբեմն մենք լսում ենք ավելի արդյունավետորեն և ավելի լավ, քան այլ դեպքերում: Կան լսելու երկու տեսակներ՝ **պասիվ** և **ակտիվ**:

Պասիվ կամ պատրաստակամ ունկնդրումը լսելու գործընթացն է առանց արձագանքելու, որը թույլ է տալիս մարդուն ազատորեն խոսել՝ առանց դադարների կամ միևնույն ժամանակ ուրիշ գործով զբաղվելու: Պասիվ լսողության դեպքում դուք հետաքրքրությամբ կենտրոնանում եք տեղեկատվությունը հասկացնելու վրա, բայց ունկնդիրը չի հետևում այն ամենին, ինչ դուք ասում եք և ոչ մի գործողություն չի ձեռնարկում:

Ակտիվ կամ մտածողական ունկնդրումն առկա է, եթե ունկնդիրն իսկապես հետաքրքրված է գրուցակցի խոսքերով և նրա հետ պարբերաբար ստուգում է՝ արդյոք ճիշտ է հասկացել տեղեկատվության բովանդակությունը: Ակտիվ ունկնդրումը ենթադրում է փոխազդեցություն, որոշակի արձագանք՝ որպես ուշադիր լսելու և լսածը հասկացած լինելու նշան: Այդ դեպքում պայմանական նշաններով ցույց եք տալիս, որ ուշադրություն եք դարձնում: Արձագանքելու պայմանական նշաններ են, օրինակ, գլխով անելը, աչքերով կապ հաստատելը, դիմախաղը, որոնք գործի են դրվում լսած տեղեկատվությանը համապատասխան: Այս ամենը թույլ է տալիս անդրադառնալ հիմնական հարցերին և ամփոփել ունկնդրելու արդյունքում ստացած ողջ տեղեկատվությունը:

Ստուգման նպատակների իրագործման համար հարցազրույցի ժամանակ անհրաժեշտ է ինչպես ակտիվ ունկնդրել ասվածն ամբողջությամբ լսելու համար, այնպես էլ կարողանալ զրույցին քննադատաբար մոտենալ և ձեզ ասվածը ավելի խորությամբ բացահայտել:

## **ԱԿՏԻՎ ԼՍԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱ**

### **ՀԱՅԵԼԱՅԻՆ ՄԵԹՈԴ**

Կրկնում եք ձեզ ասված բառերը կամ բառակապակցությունները: Սա նշան է խոսողի համար, որ դուք ամբողջը լսել եք և տալիս եք հավանության զգացում:

### **ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Վերաձևակերպում կամ վերահաստատում եք ձեր լսածը սեփական բառապաշարով՝ երաշխավորելու, որ հասկացել եք տեղեկատվության ողջ բովանդակությունը: Սա խոսողին հնարավորություն է տալիս մշակելու և պարզեցնելու ասելիքը և կարող է խթանել խոսողի կողմից ավելի մեծ օբյեկտիվություն:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Ամփոփումն ընդգրկում է քննարկման ենթակա հիմնական տարրերի մեկտեղումը և կազմակերպումը, որ դրանք ստուգվեն, հաստատվեն կամ ուղղվեն:

## ԼՍԵԼՈՒ ՀՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Այս վարժությունը կարող էք օգտագործել ուսանողների խմբի կամ ուսանողների ներկայացուցիչների հետ՝ նրանց օգնելու մտածել պասիվ և ակտիվ լսողության նշանակության մասին:

Բաժանեք ուսանողների խումբը երկու առանձին խմբերի՝ Ա և Բ: Ա խումբը լսողներն են, իսկ Բ խումբը՝ խոսողները: Սենյակից դուրս եկեք Բ խմբի անդամների հետ և բացատրեք, որ պետք է 3 րոպե խոսեն այնպիսի թեմայով, որով իրոք հետաքրքրված են: Առանձին տեղեկացրեք Ա խմբի անդամներին, որ քանի դեռ նրանք լսում են գործընկերոջը, ամեն անգամ, երբ Բ խումբն ասում է մի բան, որ ստիպում է իրենց միանալ խոսակցությանը կամ հարց տալ, 5 վայրկյանով ձեռք բարձրացնեն, ապա նորից իջեցնեն: Խնդրեք նրանց սա անել ողջ խոսակցության ընթացքում: Ա խմբի անդամներին չի թույլատրվում շփման մեջ մտնել Բ խմբի անդամների հետ. կարող են միայն դիտել նրանց:

3 րոպեի ավարտից հետո հարցրեք Բ խմբին, թե ինչ էին զգում Ա խմբի հետ խոսելիս. ինչ զգացումներ առաջացան: Հարցրեք Ա խմբին՝ ինչ էին զգում խոսակցության մեջ ակտիվորեն չընդգրկվելիս:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Հարցազրույցը ծառայում է տարբեր նպատակների: Այն հնարավորություն է ոչ միայն ստանալ հարցի պատասխանը, այլև պարզեցնել խնդիրը կամ նույնիսկ գործողության դրդել այն մարդուն, ում հարց էք տալիս:

Հարցազրույցի 2 տեսակ կա, որոնցից յուրաքանչյուրը ձեզ տարբեր արդյունքներ կտա:

**Փակ** հարցերը անփոփոխ կերպով ակնկալում են փաստեր որպես պատասխաններ, կամ էլ «այո» կամ «ոչ»: Օրինակ՝ «Արդյո՞ք ծարավ ես»: Փակ հարցերը օգտակար են, երբ ուզում եք հատուկ տեղեկատվություն՝ համաձայնությունը հաստատելու կամ



հետագա գործողություններից առաջ ինչ-որ բան ստուգելու համար:

Փակ հարցերը օգտակար չեն, եթե ուզում եք մարդկանց հրավիրել՝ իրենց կամ իրենց սեփական փորձի մասին խոսելու: Փակ հարցերը խոսակցության ազատ հոսքը խոչընդոտելու ներուժ ունեն: Հարցադրման ժամանակ դրանք ստեղծում են սահմանափակ մթնոլորտ, և մարդիկ «ճիշտ» պատասխան փնտրելու հարկադրանք են զգում:

**Բաց** հարցերը առաջացնում են ավելի երկար պատասխաններ: Դրանք սովորաբար սկսվում են «ինչ», «ինչու», «ինչպես» բառերով: Բաց հարցը հարցնում է հարցվողներին իրենց գիտելիքների, կարծիքի կամ զգացմունքների մասին: «Պատմեք ինձ» և «նկարագրեք» բառերով սկսվող հարցերը կարող են օգտագործվել նույն կերպ, ինչ բաց հարցերը: Օրինակ՝ «Ինչ եղավ հանդիպման ժամանակ», «պատմեք ինձ՝ հետո ինչ եղավ», «նկարագրեք իրավիճակն ավելի մանրամասնորեն»:

Բաց հարցերի պատասխանները կարող են տրվել տարբեր ձևերով: Դրանք քաջալերում են մարդկանց.

1. հստակեցնել իրենց մտածածը,
2. տեսնել՝ ինչ ենթադրություններ նրանք կարող են անել,
3. իրենց դատողությունների համար ապացույցներ փնտրել,
4. մտածել իրենց կողմից մտքերի, ասելիքի և անելիքի հեռուանքների մասին,
5. քննարկել այլ տեսակետներ և հեռանկարներ:

Բաց հարցերը օգտակար չեն, երբ ուզում եք խոսակցությունը ավարտել, քանի որ դրանք խրախուսում են հետագա պատասխաններ:

Հարցազրույցի ժամանակ զրույց վարեք մարդկանց հետ՝ ստանալու այնքան տեղեկություններ, որքան կարող եք, և պետք է սա անել ոչ քննադատաբար: Զգույշ հարցադրման դեպքում մարդիկ ավելի ապահով կզգան ձեզ հետ կիսելու ավելի շատ տեղեկատ-

վություն, քան այնպիսի ձևով հնչող հարցերի դեպքում, որոնք նրանց մոտ պաշտպանողական արձագանք են առաջացնում:

Փորձեք «ինչո՞ւ» հարցը հնարավորինս քիչ օգտագործել, հատկապես եթե դա կապված է հարցազրույցում քննարկվող բացասական երևույթի հետ: «Ինչո՞ւ»-ով հարցերը լավ խնդրանքի բովանդակություն ունենալու պարագայում կարելի է օգտագործել, բայց այդ դեպքում ևս հնարավոր է մարդկանց մոտ պաշտպանողական արձագանք առաջանա, ուստի լայնախոհ եղեք դրանց օգտագործման ժամանակ: Այդպիսի հարցի օրինակ է. «Ինչո՞ւ՞ ես ընտրել...»:

Միանգամից բազմաքանակ հարցեր տալը կարող է դրանց պատասխանող անձի համար շփոթեցնող լինել: Մարդիկ համոզված չեն լինում, թե որ հարցին է անհրաժեշտ պատասխանել առաջինը, ինչպես նաև նրանց հնարավորություն է տրվում խուսափել ոչ ձեռնտու հարցերին արձագանքելուց: Միաժամանակ մի քանի հարց տալու դեպքում ձեզ համար ավելի քիչ հավանական է դառնում անհրաժեշտ ու փնտրվող տեղեկատվության ստացումը: Հարցերը տվեք հերթականությամբ, հատկապես եթե դրանք երկար են:

**Ուղղորդող հարցերը** առաջարկում են պատասխանը կամ էլ այնպիսի բովանդակություն ունեն, որ ուղղորդում են դեպի ցանկալի պատասխան: Երբ ուղղորդող հարց եք տալիս, այդկերպ դրդում եք մարդուն պատասխանել որոշակի ձևով, ինչը կարող է օգտակար չլինել, քանի որ հնարավոր է՝ չստանաք հարցին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը: Ուղղորդող հարցեր տալով ստանում եք հարցի պատասխանն ուզած ձևով՝ ի հակադրություն անկեղծ պատասխանի: Այդպիսի հարցի օրինակ է. «Արդյո՞ք չպետք է հաշվի առնեիք...»:

**Մարտահրավեր նետող նպատակային հարցադրումներ** անելը կարող է դիտվել որպես հակամարտող կամ քննադատական, ինչը սովորաբար ազդում է մարդկանց վրա՝ պաշտպանողական արձագանք առաջացնելով և ավելի անհավանական դարձնելով ձեր ցանկացած տեղեկատվության ազատ տրամադրումը: Եթե նպատակային կերպով մարտահրավեր նետող բարդ հարցեր

եք տալիս, չեք ստանա այնպիսի խորը տեղեկատվություն, ինչպիսին փնտրում եք: Այդպիսի հարցի օրինակ է. «Դա այն չէ՞ր, որ դուք պետք է այլ կերպ արած լինեիք»:

### **ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Այս վարժությունը կարող եք օգտագործել ուսանողների խմբի կամ ուսանողների ներկայացուցիչների հետ՝ նրանց օգնելով մտածել բաց և փակ հարցերի նշանակության մասին:

Անհրաժեշտ են երկու տարբեր լուսանկարների կամ նկարների կրկնօրինակներ:

Բաժանեք ուսանողների խումբը զույգերի և ամեն զույգից մեկին նկար տվեք այնպես, որ միայն իրենք տեսնեն: Զույգից մեկը տեսնում է նկարը, բայց երկրորդը պետք է նկարի այն՝ հիմնվելով այն տեղեկատվության վրա, որ ստանում է նկարը տեսնող իր զույգից: Նկարագրող մարդը կարող է պատասխանի միայն փակ հարցերի և չպետք է տրամադրի լրացուցիչ տեղեկատվություն:

Նկարողները պետք է նկարեն այն, ինչն, իրենց մտածելով, առկա է նկարում և իրական նկարին այնքան մոտ պատկեր, որքան կարող են՝ հիմնվելով փակ հարցերից ստացած տեղեկությունների վրա: Այնուհետև բոլորը մեկը մյուսի հետ պետք է համեմատեն իրենց նկարածները և սկզբնական նկարը, ապա սկսեն քննարկումը:

Այնուհետև զուգակիցները պետք է փոխանակեն դերերը, և այս անգամ նկարող մարդը կարող է բաց հարցեր տալ:

Ի վերջո, բոլորը մեկը մյուսի հետ համեմատում են իրենց նկարածները և սկզբնական նկարը, ապա սկսում են ամբողջական քննարկումը:

## Արդյունավետ հետադարձ կապի A, B, C, D կանոնները

Եթե ծրագիրը ղեկավարող թիմի անդամ եք, հետադարձ կապ ապահովելը էական է, բայց ինչպե՞ս դա անել արդյունավետորեն: Այս հարցում ձեզ կօգնեն արդյունավետ հետադարձ կապի A, B, C, D կանոնները:

A կանոնը կրում է անգլերեն «accurate» բառի իմաստը, որը նշանակում է «ճշգրիտ», B-ն «balanced» բառից է և նշանակում է «հավասարակշռված», C-ն՝ «constructive» բառից՝ «կառուցողական» նշանակությամբ, իսկ D-ն՝ «depersonalised», որ նշանակում է «անանձնական»: Այս 4՝ A, B, C, D կանոններն էլ կազմում են արդյունավետ հետադարձ կապի առանցքը:

### ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ

Հստակ խոսեք, երբ մեկնաբանում եք ուսումնական գործընթացը և տրամադրեք ապացույցներ ձեր ասածների վերաբերյալ: Խուսափեք անվերապահ ընդհանրացումներից կամ խոսքում զգացմունքային պոռթկումներից: Եթե ուսումնասիրության արդյունքում տեղեկանում եք, որ մարդկանց 67 տոկոսը չեն հավանում ձեր կողմից ստացված հետադարձ տեղեկատվությունը, երբեք մի ասեք հանձնաժողովի անդամներին, թե չեն հավանել 97 տոկոսը:

### ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԻԹՅՈՒՆ

Եթե անգամ ամենից հաճախ ուսանողների կողմից բացասական կարծիքներ են հնչում, միայն բացասական մեկնաբանությունները մի փոխանցեք խմբի անդամներին. հայտնեք նաև դրական կողմերի մասին: Սա օգնում է մեղմել հարվածը և ավելի պրոֆեսիոնալ երևալ:

### ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետք է ոչ միայն ուղղակի իմանալ խնդիրների մասին, այլև օգնել գտնել դրանց լուծումները: Եթե որևէ հարց եք բարձրացնում՝

միաժամանակ հանդես եկեք առաջարկություններով: Սա նույնպես օգնում է ավելի պրոֆեսիոնալ երևալ:

### **ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ**

Եթե անգամ ուսանողները մտածում են, որ հանձնաժողովի անդամը ինչ-որ բան սխալ է արել, միշտ էլ դժվար է անել կամ ստանալ անձնական մեկնաբանություններ: Հանդիպումների ժամանակ փորձեք ոչ ոքի անունով չհիշատակել: Խոսեք դասընթացի մեթոդաբանության և ուսումնական գործընթացի վրա դրա ազդեցության մասին:

### **ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ**

Որպես ստուգող հանձնաժողովի անդամ՝ հետազոտության ընթացքում որոշ նիստեր գլխավորելու պատասխանատվություն կկրեք: Ահա թե ինչու ստիպված կլինեք միջնորդել քննարկումները մի շարք մարդկանց հետ՝ երաշխավորելու, որ հասկանում եք նրանց կարծիքների իրական պատկերը:

Միջնորդի դերը քննարկմանն աջակցելն ու այն խրախուսելն է՝ երաշխավորելով, որ յուրաքանչյուրը կարող է համագործակցել նրա հետ, ում հետ ցանկանում է: Միջնորդը կառավարում է քննարկումը՝ միաժամանակ հետևելով օրակարգին ու ժամանակի պլանավորմանը: Այս դերը կարող է դժվար լինել, և անհրաժեշտ է ճարպկորեն միանգամից մի շարք գործառույթներ իրականացնել:

### **ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻՆ**

Ստորև ներկայացնենք մի քանի էական հասկացություններ, որոնք պետք է տեղ գտնեն ձեր մտածելակերպում բանավեճերը միջնորդելիս:

### **ՀԵՏԵՎԵԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ**

Նիստին տրամադրվող ժամանակը չի կարող լինել այնքան երկար, որքան ուզենաք, ուստի պետք է շատ բաներ տեղավորել

որոշակի ժամանակահատվածում: Անհրաժեշտ կլինի հանձնաժողովի այլ անդամներին էլ ընդգրկել հարցման մեջ՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուրին տրվում է խոսելու հնարավորություն: Հիշենք, որ հարցազրույցն ավարտին հասցնելու համար պետք է օգտագործել փակ հարցեր:

### **ՊԱՀՊԱՆԵԼ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆԸ**

Որպես ստուգող հանձնաժողովի անդամ կարևոր է չեզոք դիրքում լինել, ինչը հատկապես էական է միջնորդների համար՝ երաշխավորելու, որ նրանք չեն ընկալվում որպես կողմնակալ:

### **ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ**

Սա կօգնի ձեզ, եթե ուզում եք հետևել օրակարգին: Օգտագործեք հարցազրույց վարելու հմտությունները թեմայից շեղվելու դեպքում մարդկանց բուն թեմային վերադարձնելու համար և մի վախեցեք քաղաքակիրթ կերպով նրանց հիշեցնել հիմնական հարցի մասին:

### **ԽՐԱՆՈՒՄԵԼ ԵՎ ՔԱԶԱԼԵՐԵԼ ՊԱՏԱՄԵԱՆՆԵՐԸ**

Որպես միջնորդ՝ ձեր պատասխանատվությունն է երաշխավորել, որ յուրաքանչյուրն ազատ մասնակցություն ունենա քննարկմանը: Սա հատկապես կարևոր է ուսանողների խմբի հետ զրուցելիս, քանի որ, հնարավոր է, որոշ ուսանողներ ազատ չզգան ամբողջ խմբի ներկայությամբ խոսելու անհրաժեշտության դեպքում: Հնարավորինս պարզեք, որ միջավայրը հարմարավետ լինի ուսանողների ազատ խոսելու համար: Ձեր լսելու և հարցազրույց վարելու հմտություններն այս հարցում օգտակար ու արժեքավոր կլինեն:

### **ԿԱՐԳԱՎՈՐԵԼ**

Փորձեք խուսափել ամբողջ ժամանակ նույն մարդկանց հետ զրուցելուց. ձեզ հարկավոր է հնարավորինս լայն մասնակցություն կազմակերպել: Որպես միջնորդ դուք պատասխանատու եք բանա-

վեճը կառավարելու համար, և պետք է ձեր այդ ունակությունները երաշխավորեք յուրաքանչյուրին, ով կցանկանա աջակցել:

## **ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԷՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Աչքերով կապ պահպանեք լսարանի հետ:

Ձեր շարժումնը պետք է լինի գիտակցված: Փորձեք անկաշկանդ շարժվել՝ ցույց տալով, որ թեման ձեզ համար հետաքրքրական է:

Խուսափեք բացասական պահելաոճից:

Ուշադիր եղեք: Փորձեք գլխով անել, ժպտալ կամ համաձայնողական փոքրիկ բացականչություններ անել:

Միտքն արթուն պահեք ողջ լսածը վերլուծելու համար:

Մի՛ ընդհատեք խոսողին ձեր լուծումները պարտադրելու համար:

Հստակեցրեք ձեր հասկացածը զրուցակցի հետ:

Ուշադրությունն դարձրեք պատասխանին և թույլ տվեք մարդուն ամբողջությամբ հայտնել իր ասելիքը:

Ուշադրությունն դարձրեք ոչ բանավոր պայմանական նշաններին: Օրինակ՝ որոշ նշաններ արտահայտում են անհարմարության կամ լարվածության զգացում:

Խոսեք դանդաղ ու հստակ և եղեք հետևողական:

Գրառումներ արեք և հստակեցրեք ցանկացած հատված, որ չեք հասկացել:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Որպես ուսանող տեսաբան՝ տարբեր մարդկանց հետ կընդգրկվեք կառույցի ներսում կազմակերպվող բոլոր մակարդակների հանդիպումներում: Նաև կհանդիպեք այլ տեսաբանների և հետազոտության կազմակերպիչների հետ: Տարբեր ձևերով (ինչպիսիք են հանդիպումը կամ խմբային հարցումը) արդյունավետորեն հաղորդակցվելու ունակություն զարգացնելը շատ կարևոր է:



Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա

**«ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ  
ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ»**



**ԱՍՈՂԻԿ**

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)

